

2854

ՀԱՅԿԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ՅԱՐԻՑԻՆ

ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ  
ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ

ՅԿ26

Ց-24

ԻՍԳԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՎԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

08 JUN 2005

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՓԻԼՍՈՓԱՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

14 NOV 2008

3K26  
8-24

Ա. ՑԱՐԻՑԻՆ

Կ.

ԼԵՆԻՆԻ ՊԱՅՔԱՐԸ  
ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ

28 AUG 2013

2854

Լենինի այն աշխատութիւնները, վարած  
 մերկացում են աստվածաշինարարութիւնը,  
 աստվածորսումն ու նրբացրած տերաբա-  
 հանութեան ժյուս ձեերը, ամենաակառույ  
 նշանակութիւն ունեն մեր որերէ համար:  
 Ընկ. Յարիցինի աշխատութիւնը բացահայ-  
 տում է իդեալիզմի ու կրոնի դեմ Լենինի  
 ձգած պայքարի հսկայական նշանակութիւ-  
 նը ուսակցիայի դարաշրջանում, յերբ Լենինը  
 պաշտպանեց ու զարգացրեց մարքսիզմի փի-  
 լիսոփայութեան—դիալեկտիկական մասերիս-  
 լիզմի—հիմնական դրույթները:



491  
40

А. ЦАРИЦЫН  
 ЛЕНИН В БОРЬБЕ  
 С БОГОСТРОИТЕЛЬСТВОМ

Государственное издательство полит. литературы  
 Ереван ● 1939

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆԸ  
 ԼԻԲԵՐԱԼ ՅԵՎ ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԲԱՆԱԿՈՒՄ  
 1908—1912 Թ. Թ. ՌԵԱԿՑԻԱՅԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ: ԱՍՏՎԱԾՈ-  
 ՐՈՆՈՒՄ: ՌԵԱԿՑԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻԳԵԱԼԻԶՄԻ ՅԵՎ ԿՐՈՆԻ  
 ԴԵՄ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշինարարութիւնը՝ կրօնական-փիլիսոփայական մի  
 հոսանք, վորով բռնված էյին սոցիալ-դեմոկրատական ինտելիգեն-  
 ցիայի վորոշ տարրեր, առաջացավ ու տարածվեց ռեակցիայի դա-  
 րաշրջանում (1908—1912 թ. թ.) հասարակական շարժման անկ-  
 ման և բուրժուական ինտելիգենցիայի մեջ կրօնական արամա-  
 դրութիւնների աճման մթնոլորտում: Սա մի ժամանակաշրջան  
 էր, վոր վրա հասավ 1905 թվի հեղափոխութեան պարտութիւնից  
 հետո, յերբ ցարական կառավարութիւնը, վորն ամենից առաջ  
 ճորտատեր-կալվածատերերի շահերն էր ներկայացնում, բլոկի  
 մեջ մտավ բուրժուազիայի հետ, մի քայլ ևս անելով ինքնակալու-  
 թիւնը բուրժուական միապետութեան վերածելու ճանապարհին:  
 Ինքնակալութիւնը կատաղի հարձակում սկսեց բանվոր դասա-  
 կարգի ու աշխատավոր գյուղացիութեան դեմ: Յարիզմը փորձեց  
 հենվել գյուղի կուլակութեան վրա, գյուղը կուլակներին կողոպ-  
 տելու հանձնելով: Ռեակցիայի հարձակումն ընթանում էր ամբողջ  
 գծով: Յարական կառավարութիւնը 1907 թ. հունիսի 3-ին ցրեց  
 II Պետական դուման և հրապարակեց նոր ընտրական որենք, վորը  
 բանվորների և գյուղացիների մեծ մասին, ինչպէս նաև կեղեք-  
 ված ազգերին, զրկում էր ընտրական իրավունքներից: Դումայի  
 սոցիալ-դեմոկրատական դեպուտատներն ուղարկված էյին տաժա-  
 նակիւր աշխատանքի ու աքսոր: Ամբողջ յերկրում մոլեգնում էյին  
 պատժիչ ջոկատները, վոստիկանութիւնը տակնուվրա յեր անում  
 արհեստակցական կազմակերպութիւնները: Յարական կառավար-

բությունը դադանաբար դատաստան տեսավ հեղափոխական բան-  
վորների ու գյուղացիների հետ: 1907 թ. մինչև 1910 թ. ժամա-  
նակաշրջանում 26 հազար մեղադրական դատավճիռ հանվեց հե-  
ղափոխությանը մասնակցելու համար: Մոտ 6 հազար մարդ զըն-  
դակահարվեց: Կախող-մինիստր Ստոլիպինը կախադաններով պա-  
տեց ամբողջ յերկիրը:

Ռեակցիայի հարձակումը, հասարակական շարժման անկումը  
կազմալուծում ու քայքայում սուաշայրին առաջին հեղափոխու-  
թյան ուղեկիցների մեջ: Առանձնապես խորն էր կազմալուծումը  
ինտելիգենցիայի մեջ: Նրա մի մասն անցավ հեղափոխության բա-  
ցահայտ թշնամիների բանակը:

Բուրժուական ինտելիգենցիայի և մանր բուրժուազիայի շար-  
քերում ռեակցիայի ժամանակաշրջանում նկատվում են հուսա-  
լքման, անկման տրամադրություններ, իսկ որս հետևանքով՝  
ուժգին ձգտում դեպի կրոնը, դեպի միստիկան:

Ցարիզմը հեղափոխական շարժման դեմ կռվելիս ոգտադոր-  
ծում է վոչ միայն դահճին, այլև տերտերին: Տերտերները Ֆանա-  
տիկոս ջանասիրությամբ վոստիկանական Փոենկցիաներ էյին կա-  
տարում: Տակավին Մարքսը «Լուսի Բոնապարտի բրյումերի 18-ը»  
աշխատության մեջ տերտերներին անվանում էր յերկրային վոստի-  
կանության խուզարկու շներ: Լենինը գյուղական տերտերներին  
անվանում էր «պետական ուղղափառության ուրյադնիկներ»,  
մատնանշելով, վոր հանձին հոգևորականության կառավարու-  
թյունն ունի իր սեփական չինովնիկները: Լենինն հոգևորականու-  
թյանն անվանում էր «ՓարաՎալոր ճորտատերեր», մատնանշում  
էր, վոր վոստիկանական ինքնակալությունը կրոնը տոգորել է  
«կուտուղիայի վոգով»:

«Բուրժ ու ամեն տեսակ կեղեքիչ դասակարգերը,—գրում էր  
Լենինը,—իրենց տիրապետությունը պահպանելու համար կարիք  
ունեն յերկու սոցիալական Փոենկցիայի՝ դահճի Փոենկցիայի և  
տերտերի Փոենկցիայի: Իահիճը պետք է ճնշի կեղեքվածների բո-  
ղոքն ու վրդովմունքը, տերտերը պետք է նրանց համար նկարա-  
գրի դասակարգային տիրապետության պահպանման դեպքում  
թշվառությունների ու զոհերի մեղմացման հեռանկարները (սա  
առանձնապես հարմար է անել առանց յերաշխիք տալու այդպիսի  
հեռանկարների «իրադործելիության» համար...» և դրանով իսկ  
նրանց հաշտեցնի այդ տիրապետության հետ, նրանց հեռացնի  
հեղափոխական գործողություններից, խախտի նրանց հեղափոխա-

կան տրամադրությունը, խորտակի նրանց հեղափոխական վճռա-  
կանությունը»:<sup>1</sup>

Ամբողջ ռեակցիան առհասարակ, և մասնավորապես լիբերալ  
ռեակցիան ուժգնորեն ոգտադործում էր կրոնը հեղափոխական  
շարժման դեմ պայքարելու համար:

Ռեակցիայի կողմից կրոնի ոգտադործումն անդրադարձավ  
նաև III Դումայի կազմի վրա, վորին Լենինն անվանում էր բարե-  
պաշտ դումա: Յեթե I Պետական դումայում կար 19 հոգևորական  
դեպուտատ, յերկրորդում՝ 17, այսա III Դումայում կար արդեն  
47 տերտեր-դեպուտատ: Հոգևորականությունն իր վողջ եյու-  
թյամբ շահադրգուված էր ինքնակալության պահպանումով: Մի-  
նողային մամուլը շանթ ու կայծակ էր արձակում հեղափոխու-  
թյան դեմ, Դումայի կազմի մեջ մտցված տերտերներին խիստ  
նակաղ տարով պաշտպանելու միապետական կարգերը. «Բահանա-  
ներն ընտրված և ուղարկված են Պետական Դումա իրրև վոչ մի-  
այն ուղղափառ յեկեղեցու սպասավորներ, այլև իրրև ոուս աջ  
մարդիկ, միապետության արտահայտիչներ, միապետություն,  
վորը դավանվում և հակադրվում է հեղափոխությանը, այսինքն  
Դումայում ցարական ինքնակալությունը պաշտպանելու համար»:

Մեկկացնելով լիբերալ բուրժուազիային, Լենինը ցույց էր  
տալիս, վոր հակահեղափոխական լիբերալ բուրժուազիան ժողո-  
վըրդի դեմ պայքարելիս ջանում է ամրացնել ու միքիչ նորոգել  
տրադիցիոն վոստիկանական կրոնը: Կրոնի նորոգումն ու ամրա-  
պնդումը աշխատավորական մասսաներին անբարոյացնելու և հի-  
մարացնելու լիբերալ մեթոդներից մեկն է: Մասսաներին հնազան-  
դության մեջ պահելու համար տիրապետող շահադործող դասա-  
կարգերը (կալվածատերեր և կապիտալիստներ) լայնորեն կիրա-  
ռում էյին վոչ միայն ցարական նաբայկան, այլև—ուղեղները  
թունավորելու համար—հոգևոր ողի՝ նորոգված, ավելի նրբաց-  
րած, ավելի «կուլտուրական» կրոնի ձևով:

Լենինը նշում էր, վոր ««կուլտուրական» կապիտալը ձգտում  
է կազմակերպել ժողովրդի հիմարացումը կրոնական հաշիշով՝  
յեկեղեցական խաբեյության ավելի նուրբ միջոցներով, քան այն  
միջոցները, վոր ոգտադործում էր հնում ապրող ոուսաստանյան  
շարքային «տեր հայրը»»:<sup>2</sup>

Իրրև ցարիզմի պաշտպաններ, բացահայտ միապետականներ

<sup>1</sup> Լեճիճ, Յերկեր, հ. XVIII, էջ 259:

<sup>2</sup> Լեճիճ, Յերկեր, հ. XIV, էջ 82:

հանդես յեկան կազմեաները: Բուրժուական լիբերալիզմն ուխտա-  
գրթութեան իսկական օրգաններ եր կատարում: Կազմեական  
ամենաակնաթուր գրողների մի խումբ— Բերդայեվը, Բուլգակո-  
վը, Մարոսյեն և ուրիշ. 1909 թ. գարնանը լույս ընծայեցին «Вехи»  
ժողովածուն, վորը, Լենինի արտահայտութեամբ, հանդիսանում  
էր «ոեակցիոն կեղտալիք» ամբողջական հեղեղ, «լցված դեմոկրա-  
տիայի վրա», «լիբերալ ոեներգատութեան ենցիլլոպեդիա»: Ժողո-  
վածուն միանգամայն բացահայտ քարոզում եր կրոնական խախ-  
րամուրթուն, միատիկա: Բուլգակովը հայտարարում եր, թե  
«աստված բաղխում է ինտելիգենտական սիրտը»: Կազմեաները կոչ  
էին անում ինտելիգենցիային «...կատարել,—ինչպես հեղեղաբար  
գրում եր Լենինը,—ժողովրդական մասսաների հոգևոր ստրկու-  
թյունը պահպանելու «մեծ, սուրբ գործը»»<sup>1</sup>:

Յարիզմի հանդեպ իրենց ծառայամտութեան և ստորաքարշու-  
թյան մեջ կազմեաները այնտեղը հասան, վոր ցարական իշխանու-  
թյանը չնորհակալություն ուղղեցին հեղափոխութեան ճնշման  
համար և հայտնեցին, վոր պետք է «որհնել այս իշխանութեանը,  
վորը միակն է, վոր իր սվիններով ու բանտերով գեռ պաշտպա-  
նում է մեզ ժողովրդի ցասումից»:

Չարմանալի չէ, վոր արքեպիսկոպոս Անտոնի Վոլինսկին, այդ  
կատաղի սեհարյուրյակային խախրամուրը, մամուլում վողջու-  
նեց «Вехи»-ի հեղինակներին նրանց հակահեղափոխական հայացք-  
ների համար:

Լենինը, մերկայնելով «Вехи» ժողովածուն, ընդգծում եր,  
վոր «վեխականությունը» լիբերալ բուրժուազիայի հակահեղափո-  
խական իդեոլոգիայի վառ արտահայտությունն է, նրա վախի  
արտահայտությունը ժողովրդի հանդեպ: Բուրժուազիան, ժողո-  
վրդից վախեցած, շուտ յեկավ դեպի ամեն մի ոեակցիայի, միս-  
տիկայի, միջնադարայնութեան պաշտպանութեան կողմը—ընդգեծ  
ժողովրդի:

Լենինը բացահայտում է լիբերալների այն մասի կեղծավո-  
րությունը, վորոնք պարսավում էին «Вехи»-ի հեղինակներին  
իրենց ոեակցիոն հայացքները շատ անզգուշ դուրս տալու և չա-  
փազանց անկեղծորեն թղթերը բացելու համար: Մարոսյեն, Իդգո-  
յեվը և ուրիշ. անկեղծորեն ասացին այն, ինչի մասին կազմեաների  
մի մասը գերադասում եր խոսել ավելի քողարկված ձևով:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XIV, էջ 82:

\* \* \*

Ավելի նրբացրած, մասսաների հիմարացման համար ավելի  
(քան արագիցիոն ուղղափառությունը) հարմարեցրած կրոնի քա-  
րոզով ամենից առաջ հանդես յեկան հակահեղափոխական բուր-  
ժուազիայի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպես աստվածորոնող-  
ները, վորոնք ուղղակի խնդիր էին դնում իրենց առջև՝ պայքա-  
րելու սոցիալիզմի, մարքսիզմի և բանվորական շարժման դեմ:

Աստվածորոնողները (Ս. Բուլգակով, Գ. Մերեժկովսկի,  
Ն. Բերդայեվ, Չ. Գիպպիուս և ուրիշ.) խմբավորվել էին Պետեր-  
բուրգի կրոնական-փիլիսոփայական ընկերութեան շուրջը: Լենինը  
նշում է, վոր այդ ընկերութեան ժողովներում լիբերալ-«ոեֆոր-  
մատորական» շարժումն իր արտահայտիչները գտավ «ուտ յերի-  
տասարդ հոգևորականութեան վորոշ մասի մեջ»<sup>1</sup>: Այդ հոգևորա-  
կանությունը նոր ուղիներ եր վորոնում՝ ժողովրդական մասսանե-  
րը յենթարկելու կրոնին, վորովհետև հոգևորականութեան կիրա-  
ռած վոստիկանական հին մեթոդներն արդեն չափազանց վարկա-  
բեկել էին կրոնն ու տերտերներին: Դա կազմեական ինտելիգեն-  
ցիայի ոեակցիոն պայքարն եր ընդդեմ հեղափոխութեան, ընդդեմ  
սոցիալիզմի, ընդդեմ ժողովրդի: Հակահեղափոխական լիբերալ-  
աստվածորոնողները «վորոնում էին» ինչ-վոր «ընդհանուր աստ-  
ված», «բարոյական իդեալներ», «բարու, գեղեցիկութեան ու կա-  
տարելութեան» աստված, քարոզում էին «աստծու թագավորու-  
թյունը յերկրի վրա»:

Աստվածորոնողները վկայակոչում էին այն բանը, թե իբր  
«անդադրում աստվածորոնումը թագնված է ոուսական հոգում»,  
վկայակոչում էին «ժողովրդական» հասկացողությունն աստծու  
մասին:

Մերկայնելով աստվածորոնողներին և աստվածաշինարարնե-  
րին, Լենինը Ա. Մ. Գորկուն ուղղած նամակում գրում եր. «Աստ-  
վածիկի և աստվածայինի մասին «ժողովրդական» հասկացողու-  
թյունը «ժողովրդական» բթությունն է, ծեծկվածություն, միան-  
գամայն այնպիսին, ինչպես «ժողովրդական պատկերացումը»  
ցարի մասին, անտառային վոգու մասին, կանանց մագերից բրո-  
նած քարը տալու մասին»<sup>2</sup>: Աստվածորոնողներն արմատացնում  
էին «նորոգված», նրբացրած տերտերականություն՝ բուրժուա-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. VII, էջ 84:

<sup>2</sup> Լենին, Յերկեր, 4. XVII, էջ 85:

զիստի ու կարվածատերերի դասակարգային տիրապետութիւնն ամբողջնելու համար:

Աստվածորոնողներն իրենց հակահեղափոխական տրամադրութիւններին միատիկ ձև ելին տալիս: Նրանք ջանում ելին մասսաներին ատելութիւն ներշնչել դեպի յերկրային կյանքը, պրոլետարիատի դասակարգային պայքարը հայտարարում ելին «մեղչանութիւն», սերտերական գաղափարներ ելին քարոզում հանդերձյալ կյանքի և հոգու անմահութեան մասին: Աստվածորոնողներն առանձնապես յեռանդաղին ձգտում ելին հեղափոխութեան և պետութեան հարցը սքողել կրօնական-միատիկական մշուշով: Բերդյայեվը հանդես յեկալ ընդդէմ «ամեն տեսակ մարդկային հեղափոխութեան», հոգուտ կրօնի, վորը նրա կարծիքով պետք է լինի մարդու և աստու դաշինքը: Ինքնակալութիւնն ու յեկեղեցին ժողովրդի զայրույթից պաշտպանելու համար Բերդյայեվը դրանք հայտարարում է միատիկական ու խորհրդավոր: Աստվածորոնողները բուրժուական թեորիաներ ելին տարածում պետութեան աստվածային ծագման մասին: Դրանով նրանք ուզում ելին արդարացնել ցարական ինքնակալութեան բոլոր գաղբիւրութիւնները, արդարացնել կապիտալիզմի ու շահագործման դոյութիւնը:

Այսպէս՝ բուրժուական խավարամոլները փորձում ելին աշխատավորներին հետ պահել ինքնակալութեան և կապիտալիզմի դէմ պայքարելուց:

Աստվածորոնողները դիտավորյալ կերպով խճճում ելին պետութեան հարցը, վորովհետև սա ավելի, քան վորեւէ այլ հարց, շղարհում է տիրապետող դասակարգերի շահերը:

Հակահեղափոխական լիբերալ բուրժուազիան ահաբեկված էր 1905—1907 թ. թ. հեղափոխութեանից: Նա վախենում էր ժողովրդական շարժումից: Ահա թե ինչու նա հանձին աստվածորոնողների միատիկական շղարհով էր պատում պետութեան ու հեղափոխութեան հարցը:

Աստվածորոնող Դ. Մերեթկովսկին, կրօնական հաշիշ տարածելով, հայտարարում էր, վոր միայն «կրօնական հասարականութիւնը կիրկի Ռուսաստանը»: Նա ուռւ ինտելիգենցիային առաջարկում էր միանալ ուսական յեկեղեցուն, վորպեսզի «ուսական ժողովրդի կրօնական խավար տարերքի մեջ նոր կրօնական դիտակցութիւն» մտցվի: Աստվածորոնողները ժողովրդին հիմարացնում ելին «մաքուր» աստվածիկի գաղափարով, հանդես ելին գալիս անփարաջա տերտերների դերում:

Գետերբուրդի կրօնափոխութեան ընկերութիւնը աստվածորոնման գաղափարներ էր տարածում նաև գեղարվեստական գրականութեան միջոցով: Դ. Մերեթկովսկին, Զ. Գիլպպիուսը, Վ. Յաչ. Իվանովը և ուրիշ. քարոզում ելին արվեստի միատիկականութեան գաղափարը, քարոզում ելին աստվածորոնում չափածոյի ու արձակի մեջ:

Ինչպէս սրամիտ կերպով նկատում է Մայակովսկին,

«Ռեակցիան գաղաղում էր:

Ինտելիգենտները

Թողին ամեն ինչ,

ապականցին:

Տան մեջ փակվեցին,

մոմեր ճարեցին

Ու խունկ են ծխում—

աստվածաշինարարները»<sup>1</sup>:

Աստվածորոնումը, ինչպէս մենք արդեն ասացինք, լիբերալ բուրժուազիայի հակահեղափոխականութեան ցուցանիշներից մեկն էր: «Հէ՛տ դեմոկրատիայից, հեռո՛ւ մասսաների շարժումից, հեռո՛ւ հեղափոխութեանից—այս է «Հասարակութեան» մեջ թաղավորող քաղաքական մտքի ուղղութիւնների լայն-մոտիվը»:

Այդպէս էր վորոշում Լենինը ռեակցիայի ժամանակաշրջանի լիբերալ բուրժուազիայի տրամադրութիւնները:

Աստվածորոնումը ցուցանիշներից մեկն էր բուրժուական ինտելիգենցիայի բանակում տեղի ունեցած փլուզման ու տարրնթացութեան, վորոնք սկսվել ելին 1905—1907 թ. թ. հեղափոխութեանից հետո: Աստվածորոնումն արտահայտում էր ինտելիգենտական մեղչանութեան անսահման ծառայամտութիւնն ինքնակալութեան առջև: Նա հանդիսանում էր բուրժուազիայի հակահեղափոխական շահերի արտահայտութիւնը:

«Համկ(ք)ի պատմութեան համառոտ դասնթացը» հետեյալ ցայտուն խոսքերով է ցույց տալիս իդեոլոգիական Փրոնտում հակահեղափոխութեան հարձակման ելութիւնը.

«Հակահեղափոխութեան հարձակում տեղի ունեւ իդեոլոգիական ճակատում: Հանդես յեկալ մոլայական գրողների միամբողջ բազմութիւն, վորոնք «քննադատում» և «ջարդուփշուր»

<sup>1</sup> Մայակովսկի — Վարդիմեր Իււիչ Լենին: Գոեմա: Гослитиздат, 1938, էջ 40:

<sup>2</sup> Լենին, Շերկեր, 4. XV, էջ 246:

եյին անում մարքսիզմը, թուզ ու մուր էյին թափում հեղափոխութեան վրա, անարգում էյին հեղափոխութեանը, գովերգում էյին մատնչութեանը, գովերգում էյին սեռական անառակութեանը՝ «անձնավորութեան կուլտի» ձևով:

Փիլիսոփայութեան բնադավառում ուժեղացան մարքսիզմը «քննդատելու», սեփիզիայի յենթարկելու փորձերը, ինչպես և ստալ յեկան ամեն տեսակ կրոնական հոսանքներ, վորոնք քողարկված էյին իբրև թե «գիտական» փաստարկումներով:

Մարքսիզմի «քննդատումը» մողա դարձավ:

Սյդ բոլոր պարոնները, չնայած նրանց ամբողջ խայտարղետութեանը, հետապնդում էյին մի ընդհանուր նպատակ՝ հետդարձնել մասսաներին հեղափոխութեանից<sup>1</sup>:

Աստվածորոնման քարոզիչները 1917 թվի հոկտեմբերին խորհրդային իշխանութեան հաստատվելուց հետո դարձան Խորհրդային պետութեան ամենակատաղի թշնամիները և սպիտակ-գլխարդիակներ: Աստվածորոնողներից մեկը՝ Ս. Բուլդակովը դարձավ տերտեր:

\* \* \*

Ռեակցիայի ժամանակաշրջանում ամենակատարյալ փլուզում ու տարլնթացութեան եր նկատվում նաև մենչեիկներին ու ետերներին մանր-բուրժուական կուսակցութեաններում: Ամենակատարյալոր մենչեիկները հանդիսանում էյին պրոլետարիատի վրա բուրժուազիայի ազդեցութեան տարածողները: Նրանք սկսեցին պրոպագանդա անել «ստոլիպինյան բանվորական կուսակցութեան» դադափարը, պրոպագանդա անել լիկվիդատորութեանը: Լիկվիդատորները հեղափոխութեան ուղղակի դավաճաններն էյին: Նրանք բանվորական միջավայրն էյին բերում հակահեղափոխական լիբերալների լրջունդները: Հուլա Տրոցկին (ներկայումս Փաշխտական ազենտ) արդեն այն ժամանակ, Լենինի խոսքերով, «ավելի փնասակար եր, քան վորեև լիկվիդատոր»<sup>2</sup>, նա գարչի զրպարտութեան եր տարածում բոլչեիզմի հասցեյին և լիկվիդատորութեանը քողարկելու քաղաքականութեան եր կիրառում:

Բոլչեիկների շարքերում կային նմանապես առանձին մանր-բուրժուական ուղեկիցներ: Նրանք նույնպես, ինչպես բուրժուա-

<sup>1</sup> «Համի(ր)ի պատմութեան համառոտ դասընթաց», էջ 136, Հայքադհրատ, 1938 թ.:

<sup>2</sup> Լենին, Յերկեր, 4. XV, էջ 218:

զիայի գործակալներ, ձգտում էյին բուրժուական ազդեցութեանը տարածել պրոլետարիատի վրա: Բոլչեիկներին մեջ յերևան յեկան ստղովիստներ և ուլտիմատիստներ (Բողզանով, Սլեքսինսկի և ուրիշ):

Լենինն ու Ստալինը մերկացնում էյին ստղովիզմը և ուլտիմատիզմը՝ իբրև «չուռ տված մենչեիզմ»: «Ստղովիստները» մենչեիկ-լիկվիդատորների հետ միասին գրադվում էյին աստվածաշինարարութեան և սեակցիոն բուրժուական փիլիսոփայութեան քարոզով:

Աստվածաշինարարները վոչ միայն թեորիայում, այլև պրակտիկայում հանդիսանում էյին բոլչեիկյան կուսակցութեան թըշնամիները: Լենինը պատահաբար չե նրանց անվանել «աստվածային ստղովիստներ»: Նա մատնանչում եր, վոր լիկվիդատորութեանը նույնպես «վերարբերում ե աստվածաշինարարութեանն ու աստվածաշինարարական տենդենցների պաշտպանութեանը, վորոնք արմատապես խզում են կապը մարքսիզմի հիմունքների հետ»:

Ռեակցիայի շրջանում աստվածաշինարարական քարոզը զուգորդվում եր հեղափոխական պայքարի լեզալ հնարավորութեանների ողտադրոժումից հրաժարվելու հետ, զուգորդվում եր Բողզանովի ու Լուսչարսկու ստղովիզմի և ուլտիմատիզմի հետ, մենչեիկ Յուչեիվիչի բացահայտ լիկվիդատորութեան հետ, սենեգատորութեան հետ, Բազարովի, Ռոժկովի և մյուսների մենչեիկյան դիրքերն անցնելու հետ:

Լենինն ու Ստալինը բարձր էյին պահում բոլչեիկյան կուսակցականութեան դրոշը, վճռականապես պաշտպանում էյին այդ կուսակցականութեանը, կովելով բանվորական շարժման ներսի ամեն տեսակ թշնամական հոսանքների դեմ, կուսակցութեանից քշելով բոլոր նրանց, ովքեր խանդարում էյին կուսակցութեան պայքարին: Լենինը սովորեցնում եր ատել մանր-բուրժուական թուլամորթութեանը, անկայունութեանը, վախկոտութեանը, կամադրկութեանը պայքարում, սենեգատորութեանը, ստորաքարչութեանը բուրժուատիայի ու սեակցիայի սոջև:

Լենինն ու Ստալինը, պայքար մղելով հակաբոլչեիկյան հոսանքների ու Փրակցիանների դեմ, պաշտպանում ու գարգացնում էյին մարքսիստական կուսակցութեան թեորիական հիմունքները:

Լենինի ու Ստալինի դեկավարութեամբ բոլչեիկյան կուսակ-

<sup>1</sup> Լեոն, Յերկեր, 4. XIV, էջ 100:

ցուցիչները անհաշտ պայքար եր մղում ունեցելու դեմ, հակահեղափոխական լիբերալիզմի ու ամեն տեսակի լիկվիդատորութան դեմ:

Կուսակցությունն առաջին պլանի վրա յեր մղում մասսաների դաստիարակման ու կազմակերպման համար համառ պայքարը: Անհրաժեշտ եր անելիք պայքարը հատուկն զուգորդել լեզու հնարավորություններն ոգտադործելու հետ:

Ընկեր Մտալինը պայքարի այդ ժամանակաշրջանի մասին ասում է հետևյալը. «Դա մեր կուսակցության շրջադարձի ժամանակաշրջանն էր՝ ցարիզմի դեմ բացահայտ հեղափոխական պայքարից դեպի պայքարի շրջանցիկ ուղիները, դեպի բոլոր ու ամեն տեսակի լեզու հնարավորությունների՝ ոգտադործումը—ապահովագրական դրամարկից մինչև Դոմայի ամբիոնը: Դա նահանջի ժամանակաշրջանն էր՝ այն բանից հետո, յերբ մենք 1905 թվականի հեղափոխության մեջ ջարդված դուրս յեկանք: Այս շրջադարձը մեզից պահանջում եր պայքարի նոր մեթոդների յուրացում, վորպեսզի, ուժերը հավաքելով, նորից բացահայտ հեղափոխական պայքարի դնանք ընդդեմ ցարիզմի»<sup>1</sup>:

Ռեակցիայի ժամանակաշրջանում դեպի պայքարի նոր մեթոդները կատարված շրջադարձը «ճակատագրական» դուրս յեկավ այնպիսի մարդկանց համար, ոքվեր իրենց անվանում էին մարքսիստներ, բայց յերբեք ամուր կանգնած չեն յեղել մարքսիզմի դիրքերում (Բոգդանով, Լուենաչարսկի, Ալեքսինսկի, Ռոժկով):

Այդ ժամանակաշրջանում առանձնապես ինտենսիվ եր ընթանում մեր բոլշևիկյան կուսակցության մաքրման պրոցեսը մանրբուրժուական ուղեկիցներից, վորոնք վախենում էին ունեցիկայի ժամանակաշրջանի դժվարություններից:

Ռեակցիայի ժամանակաշրջանում բոլշևիկյան կուսակցության առջև առանձին ուժով ծառայող վճռական ու համառ պայքարի խնդիրը հանուն մարքսիզմի, ընդդեմ ունեցիկոն բուրժուական փիլիսոփայության ու կրոնի, ինչպես հին, այնպես ել նորոգված կրոնի, վորը կրում եր աստվածորոնման, աստվածաշինարարության և այլ ձևեր:

1909 թ. հունիսին «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրության խորհրդակցության մեջ մեր կուսակցությունից դուրս

<sup>1</sup> Լենին և Մտալին, Յերկերի ժողովածու Համկ(բ)Կ պատմության ուսումնասիրման համար, 4. III, էջ 267, ուս. հրատ. 1936 թ.:

վոնդիցիին ոտդովիստները, վորոնք հանդես էին դալիս մախիստական փիլիսոփայության և աստվածաշինարարության քարոզով: Կուսակցության շարքերից վտարվեց Երզրանովը:

Այժմ իբրև ժողովրդի թշնամիներ մերկացված Կամենևը, Ջինովյեվը, Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին այդ ժամանակաշրջանում բազմիցս հանդես էին դալիս ի պաշտպանություն լիկվիդատորության ու տրոցիկզմի և արդեն այն ժամանակ յերկիտասանի մեթոդներ էլին կիրառում:

Յեթե մինչև 1905—1907 թ. թ. հեղափոխությունն առանձին ուժով էին առաջադրվում Մարքսի տնտեսական ուսմունքի հարցերը, հեղափոխության ժամանակաշրջանում—քաղաքականության հարցերը, ապա ունեցիկայի ժամանակաշրջանում առանձին ուժով առաջադրվեց մարքսիստական փիլիսոփայության համար պայքարելու խնդիրը:

Լենինը ցայտուն ու պատկերավոր կերպով ձևակերպել է այդ պայքարի խնդիրները.

«Որվա խնդիրն է՝ հանք փորել, թեկուզ ամենածանր պայմաններում, յերկաթ հանել, ձուլել մարքսիստական աշխարհայացքի և այս աշխարհայացքին համապատասխանող փերնաչենքերի պողպատը»<sup>1</sup>:

Բողդանովը համաձայն չեր մարքսիզմի փիլիսոփայությանը նաև ունեցիկայի ժամանակաշրջանից առաջ:

Լենինը դեռևս 1905—1907 թ. թ. հեղափոխությունից առաջ ել Պլեխանովի հետ ունեցած զրույցներում իր անհամաձայնությունն եր արտահայտում Բողդանովի փիլիսոփայության նկատմամբ: 1906 թվին Լենինը Բողդանովից ստացավ «Նմպիլիոսի նիզմի» 3-րդ պրակը: Լենինը խիստ բացասաբար վերաբերվեց Բողդանովի այդ գրքին: «Կարդալով, անրատուր կերպով զայրացա ու կատաղեցի. ինձ համար ավելի ևս պարզվեց, վոր նա դնում է դերոխալ, վորդ-մարքսիստական ճանապարհով»<sup>2</sup>,—գրում եր Լենինը Ա. Մ. Գորկուն Բողդանովի այդ աշխատության մասին: Լենինը քննադատության յենթարկեց բողդանովյան փիլիսոփայությունը յերեք տետրակներում, վորոնք, դժբախտաբար, մինչև հիմա չեն դսնված:

1908 թվի փետրվարին Լենինը Ա. Մ. Գորկուն դրած նամակում ընդգծում եր, վոր փիլիսոփայական հարցերի վերաբերյալ

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XV, էջ 54:  
<sup>2</sup> Լենին, Յերկեր, 4. XXVIII, էջ 528:

անխուսափելի յե կոխվը դեպի մախիզմ գլորված միջանի բող-  
չևիկների դեմ:

Յեվ սա պատահական չե: «Մարքսիզմի պատմական զարգաց-  
ման միջանի առանձնահատուկությունների մասին», «Մեր վերա-  
ցնողները» հոդվածներում, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ»  
հանձարեղ աշխատություն մեջ և այդ ժամանակաշրջանի ուրիշ  
աշխատություններում Լենինը մատնանշում է այն պատճառները,  
վորոնք կրոնի ու իդեալիստական փիլիսոփայությունից զերծ պայ-  
քարի հարցերն առաջ են մղել առաջին տեղերից մեկը:

Ռեալիզմի ժամանակաշրջանը 1905—1907 թ. թ. հեղափո-  
խությունից հետո «մարքսիզմ» ժամանակաշրջանն էր: Լենինը  
գրում էր.

«Պատահական չեք, այլ անխուսափելի յեր այն, վոր հեղա-  
փոխությունից անհաջողությունից հետո հասարակությունից բոլոր  
դասակարգերում, ժողովրդական ամենալայն մասնակցի մեջ հե-  
տաքրքրություն արթնացավ դեպի ամբողջ աշխարհայացքի խոր  
հիմունքներն ընդհուպ մինչև կրոնի ու փիլիսոփայությունից հար-  
ցերը, ընդհուպ մինչև մեր, մարքսիստական ուսմունքի սկզբունք-  
ներն ամբողջությամբ»<sup>1</sup>:

Փիլիսոփայական «վերլուծությունն» անհրաժեշտ էր նաև այն  
պատճառով, վոր սրբոլետարիատը 1905—1907 թ. թ. հեղափոխու-  
թյան մեջ ցույց տվեց, վոր նա «վերջին մեծ իրադարձություննե-  
րի ժամանակ լիովին հասունացել է իր ինքնուրույն պատմական  
դերի համար»<sup>2</sup>:

Փիլիսոփայական հարցերի դրուժը միջազգային հսկայական  
նշանակություն ունեցավ, վորովհետև բուրժուական Փիլիպպի  
կրիզիսի կապակցությամբ ռեալիզմն բուրժուակրիսիսի իրենուր-  
ներն սկսեցին առանձին համառությունից պրոպագանդա անել  
ռեալիզմի իդեալիստական փիլիսոփայական ուսմունքները: Մարք-  
սիստները պետք է ցույց տային, վոր միայն դիալեկտիկական մա-  
տերիալիզմն է ցույց տալիս յեղը Փիլիպպի ճշմարտությունը:

Ռեալիզմի ժամանակաշրջանում բուրժուակրիսիսի ազդեցու-  
թյունն արտահայտվեց նմանապես, Լենինի արտահայտությունից,  
«մարքսիստների մեջ յեղած մախիստական համահարակի մեջ»:  
Մախիզմը հանդիսանում էր ռեալիզմի կրողը, տերտերականու-  
թյան կրողը: Լենինը բուրժուակրիսիսի լիբերալ մեթոդներից էր

1910

համարում «բանվորներին խաբելն ու անբարոյացնելը», «կրոնը  
«ժողովրդի համար» նորոգելու և աշխուժացնելու ճգնուճների  
ուժեղացումը (իդեալիստական, կանտական և մախիստական փի-  
լիսոփայությունից զարգացման ինչպես անմիջական, այնպես էլ միջ-  
նորակալան ձևով) ...»<sup>3</sup>:

Իդեալիստական փիլիսոփայությունը ներս էյին ջաշում Բող-  
դանովը, Բագարովը, Լուճաչարսկին (վորոնք 1905 թվին հարում  
էյին բուլչևիկներին) և մենչևիկներ Յուչկեվիչին ու Վալենտինովը:  
«Համկ(բ)ի պատմությունից համառոտ դասընթացը» նշում է, վոր  
նրանք մարքսիզմի կեղծավոր ու ջողարկված ըննադատություն  
էյին կատարում «մարքսիզմի հիմնական դիրքերի «արաշտպանու-  
թյան» դրոշակի տակ»:

Նրանք յերկերեսանիորեն իրենց անվանում էյին մարքսիստ-  
ներ: Այդ ըննադատությունից վտանգն այն էր, վոր դա նկատի  
ունեք խաբել կուսակցությունը և «միակցվում էր ռեալիզմի ընդ-  
հանուր արշավին» ընդդեմ կուսակցությունից, ընդդեմ հեղափոխու-  
թյան»:

«Մարքսիստների առջև կանգնած էր մի անհետաճելի խը-  
ղիք՝ պատշաճ հակահարված տալ մարքսիզմի թեորիայի բնագա-  
վառի այդ վերասերվածներին, պոկել նրանց դիմակը, մերկացնել  
նրանց մինչև վերջը և, այդպիսով, պաշտպանել մարքսիստական  
կուսակցությունից թեորիական հիմքերը»<sup>4</sup>:

Լենինն այս խնդիրն իրագործեց իր հանձարեղ «Մատերիա-  
լիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունից մեջ:

Այս աշխատությունից մեջ Լենինը վոր միայն հետ մղեց մարք-  
սիզմի «ըննադատներին» դրոհները, այլև մերկացրեց Բողդանովին,  
Լուճաչարսկուն, Յուչկեվիչին և մյուսներին:

«Լենինի գիրքը միևնույն ժամանակ հանդիսանում է մարք-  
սիզմի թեորիական հիմքերի՝ դիալեկտիկական ու պատմական մա-  
տերիալիզմի պաշտպանումը և մատերիալիստական ընդհանրացու-  
մը կարևոր ու եյական այն ամենից, ինչ վոր ձեռք է բերել գի-  
տությունն ու, ամենից առաջ, բնագիտությունն ամբողջ պատ-  
մական ժամանակաշրջանում, Ննդիսի մահից մինչև Լենինի «Մա-  
տերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գիրքը լույս տեսնելն անցած  
ժամանակաշրջանում»<sup>5</sup>:

1 Լենին, Յերկեր, 4. XVII, էջ 481—482:  
2 «Համկ(բ)ի պատմությունից համառոտ դասընթաց», էջ 142, Հայտո-  
հրատ., 1938 թ.:  
3 Նույն տեղում, էջ 144:

1 Լենին, Յերկեր, 4. XV, էջ 68:  
2 Նույն տեղում, էջ 80:

Լենինի այս հանճարեղ աշխատութիւնը հանդիսացաւ վորպէս բաղնիքի կուսակցութեան—նոր տիպի կուսակցութեան—թերթիական նախապատրաստումը:

Ընկեր Ստալինը, նույնպէս, ինչպէս և Լենինը, վճռականորեն հանդես եկաւ իրենց դեմ: 1906—1907 թ. թ. իր հողվածներում նա պրոպագանդա յե անում և զարգացնում է Մարքսի հեղափոխական թերթիան ու փելիսոփայական ուսմունքը: Ընկեր Ստալինն այդ հողվածներում, ինչպէս և Լենինն իր աշխատութիւններում, ջանալիս հակահարկած է տալիս իրենց դեմ ու տերտերականութեանը, Լենինի հետ միասին պաշտպանում ու զարգացնում է հեղափոխական մարքսիզմը, հաղթահարելով ուսակցին բուրժուական իրենց դիւրիայի ազդեցութիւնը պրոլետարիատի վրա:

## II

ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԵԱԿՑԻՈՆ ԵՅՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԻԴԵԱԼԻԶՄԻ ՀԵՏ ՌԵՆԵՅԱՄ ԵՐԱ ՍԵՐՏ ԿԱՊԻ ՄԵՐԿԱՅՈՒՄԸ ԼԵՆԻՆԻ ԿՈՂՄԻՅ: ԼԵՆԻՆԻ «ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ ՅԵՎ ԵՄՊԻՐԻՈ-ԿՐԻՏԻՑԻԶՄ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅԳԱՐԵԼԻՍ: «ՎՊԵՐՅՈՒ» ԵՄԲԻ ՀԱԿԱՌԻՍԱԿՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՅՈՒՄԸ ԼԵՆԻՆԻ ԿՈՂՄԻՅ: ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ա. Մ. ԳՈՐԿՈՒ ՀԵՏ:

Մանր-բուրժուական ինտելիգենցիայի բանակում դադարապահան ու քաղաքական տարրութեանն այնտեղ հասաւ, վոր մարքսիզմից հեռացած ինտելիգենտների մի մասն սկսեց բուրժուական դադարանք տանել աշխատավորական մասսաների մեջ՝ քարոզելով նոր կրոն ստեղծելու անհրաժեշտութիւնը հանձին աստվածաշինարարութեան, վորն ըստ եյութեան վոչնչով չէր տարբերվում աստվածորոնումից: Աստվածաշինարարներին եյին հարում վոչ միայն բացահայտ մենչեիկ լիկվիդատորները, ինչպէս Յուլիեֆիչը, այլև վպերյոզականներ—այդ շուտ տված լիկվիդատորներ—Բոգդանովը, Լյադովը, Լունաչարսկին, Ալիքսինսկին: Կազմվեց լիկվիդատորների ու ոտղովիտների բլոկ ընդդէմ բուրժուականներին: Այդ բլոկի ներկայացուցիչները քողարկված կերպով պրոլետարիատի միջավայրն եյին ներս քաշում տերտերականութեանը, նման այն բանին, ինչպէս այդ անում եյին նաև բուրժուական աստվածորոնները:

Լենինը մատնանշում էր աստվածաշինարարութեան դեմ պայ-

քարելու հակաշինական հասարակական-քաղաքական նշանակութեանը: Նա գրում էր. «... ուսական բուրժուազիային՝ նրա հակահեղափոխական նպատակներով հարկավոր յեղալ աշխուժացնել կրոնը, բարձրացնել կրոնի պահանջը, հորինել կրոնը, ժողովրդին պատվաստել կամ ժողովրդի մեջ նոր ձևով ամբացնել կրոնը: Ուստի աստվածաշինարարութեան քարոզը հասարակական, քաղաքական բնույթ ստացաւ: Ինչպէս վոր հեղափոխութեան շըրջանում բուրժուական մամուլը համբուրում ու պաշտպանում էր ամենից տաքլուխ մենչեիկներին նրանց կադետասիրութեան համար, այնպէս էլ հակահեղափոխութեան շըջանում բուրժուական մամուլը համբուրում ու պաշտպանում է աստվածաշինարարներին—հանաք բա՛ն և— մարքսիստներին միջից և մինչև իսկ «նույնպէս բուրժուականներին» միջից յեկած աստվածաշինարարներին»<sup>1</sup>:

Յեթե աստվածորոնողներն ասում եյին, թե աստված պետք է «վորոնել», ապա աստվածաշինարարները պնդում եյին, վոր աստված չպետք է վորոնել, այլ պետք է կերտել: «Литературный распад»-ի յերկրորդ ժողովածվում Լունաչարսկին առաջարկում էր «նոր կրոն», «կրոն առանց աստծու», վորը և նա ջանում էր փաթաթել բանվորներին վզին:

Լունաչարսկին գլորվեց մինչև այնտեղ, վոր նրանց հայտարարում էր աստվածաշինարարներ, այսպիսով, բանվորներին վերադրում էր կրոնականութեանը իբրև նրանց մի ինչ-վոր անկապակի հատկութեանը: Իրականում այդ վոչ այլ ինչ էր, բայց յեթե զրպարտութիւնը բանվորներին հասցեյին:

Լենինն իր ժամանակին մերկացրել է այս վնասակար թերթիան «Բանվորական կուսակցութեան վերաբերմունքը դեպի կրոնը» հողվածում: Լենինը նշում էր, վոր կրոնը պահպանվում է «քաղաքային պրոլետարիատի հետամնաց խալերում, կիսապրոլետարիատի լայն խալերում, ինչպէս նաև դյուրաջիւթեան մասսայի մեջ...»<sup>2</sup>: Դեռ այլիկ առաջ, 1905 թվին, «Սոցիալիզմը և կրոնը» հողվածում Լենինն ընդդէմ է գիտակից բանվորի ատելութիւնը դեպի կրոնը:

«Գործարանային խոշոր արդյունաբերութեամբ դաստիարակված, քաղաքային կյանքով լուսավորված արդի դիտակից բանվորը արհամարհանքով դեն է չպրտում իրենից կրոնական նախապաշարմունքները, յերկինքը տերտերներին ու բուրժուական կեղծ

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XIV, էջ 153:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 70—71:

բարեպաշտներին և թողնում, իր համար լավագույն կյանք նվաճելով այստեղ, յերկրի վրա»<sup>1</sup> :

Աստվածաշինարարները սոցիալիզմը հայտարարում էլին նոր կրոն: Լուսաչարսկին սոցիալիզմը մեկնաբանում էր իբրև «բոլոր կրոններից ամենակրոնականը» և ապացուցում, վոր սոցիալ-դեմոկրատ—դա «ամենախոր կրոնական մարդն է»: «Աթեիզմ» հոգևածում Լուսաչարսկին գրում է, վոր «սոցիալիզմի զգացական ելույթունը» կարելի չէ բնորոշել իբրև «կրոնական աթեիզմ»<sup>2</sup> :

«Նոր կրոնը», Լուսաչարսկու և մյուս աստվածաշինարարների կարծիքով, պիտի նպաստեր սոցիալիզմի գաղափարների տարածմանը մասսաների մեջ: Իրականում նա հանդիսանում էր վորպես մի միջոց աշխատավորութան դասակարգային զիտակցութունը մթափնելու համար:

Քննադատելով Լուսաչարսկու աստվածաշինարարական դրոյթները, Լենինը «Բանվորական կուսակցութան վերաբերմունքը դեպի կրոնը» հոդվածում գրում էր, վոր «սոցիալիզմը կրոն է» դրոյթը աստվածաշինարարների համար սոցիալիզմից կրոնին անցնելու մի ձև է: Լուսաչարսկու մոտ աստվածաշինարարութունը նշանակում էր հենց անցում սոցիալիզմից դեպի կրոնը, վորի համար էլ Լենինը պնդում էր այն բանի վրա, վոր «կուսակցական դատադարտումն անհրաժեշտ ու պարտադիր է» Լուսաչարսկու վերաբերմամբ: Լուսաչարսկին հանդես էր գալիս իբրև մարքսիզմի հակառակորդ, իբրև մախիզմի ռեակցիոն բուրժուական փիլիսոփայութան քարոզիչ:

Կրոնի և սոցիալիզմի միացման փորձեր արդեն յեղել են Մարքսի ու Ենգելսի ժամանակ, որինակ Կրիզեյի կողմից, վորն իրեն սոցիալիստ էր ձևացնում:

Մարքսն ու Ենգելսը 1846 թ. գրած «Մանիֆեստ ընդդեմ Կրիզեյի» աշխատութան մեջ Կրիզեյի փորձերը մերկացրին իբրև «կոմունիզմի ցուցանակի տակ քրիստոնեյութան բոլոր գարշելիութունները սաղացնելու»<sup>3</sup> փորձեր:

Իսկական դասակարգային պայքարը Կրիզեն նենգափոխում էր մշուշապատ Փրազներով: Նա վերցնում էր վոչ թե իրական շահագործողական հասարակարգից ու անելանելի կարիքից գա-

զագած մարդուն, այլ այն մարդուն, վոր «լի չէ յերանելի Փանուսաղիաներով»:

Դրանով Կրիզեն աշխատավորական մասսաներին հետ էր պահում դասակարգային պայքարից:

Լենինն ու Ստալինը բազմիցս մատնանշել են սոցիալիզմի ու կրոնի անհաշակելիութունը: Լենինը գրում էր. «Արդի պրոլետարիատն անցնում է սոցիալիզմի կողմը, վորը զիտութունը մասնակից է դարձնում կրոնական մշուշի դեմ մղվող պայքարին և բանվորին ազատագրում է հանդերձյալ կյանքի հավատից նրանով, վոր բանվորին համախմբում է յերկրային լավագույն կյանքի իսկական պայքարի համար»<sup>4</sup> :

Ընկեր Ստալինը ամերիկյան առաջին բանվորական դելեգացիայի հետ զրուցելիս պարզաբանեց, թե ինչու մեր բուլշևիկյան կուսակցութունը հակակրոնական պրոպագանդա չէ մղում քոյոր ու ամեն տեսակ կրոնական նախապաշարմունքների դեմ: Առաջին՝ «վորովհետև նա, զիտութանն է կողմնակից, իսկ կրոնական նախապաշարմունքները զիտութան դեմ են գնում, վորովհետև յուրաքանչյուր կրոն զիտութանը հակադիր մի բան է», իսկ յերկրորդ, վորովհետև հակակրոնական պրոպագանդան «չահագործող դասակարգերին աջակցող և այդ դասակարգերի նկատմամբ հնազանդութուն քարոզող հետադեմ հոգևորականութան ազդեցութունը խախտելու ճիշտ միջոցներից մեկն է»<sup>5</sup> :

Ամեն մի կրոն (այս թվում նաև աստվածաշինարարների քարոզած կրոնը)՝ հաշիչ է ժողովրդի համար, հոգևոր ողի, վորը թունավորում է աշխատավոր մասսաների զիտակցութունը: Կրոնը,—վորը ծնունդ է առնում դասակարգային հասարակութան մեջ՝ շահագործողների դեմ մղվող պայքարում շահագործող մասսաների ունեցած թվացող անդրութան շնորհիվ,—մթափնում է մասսաների զիտակցութունը, աշխատավոր մասսաներին հետ է պահում կեղեքողների դեմ դասակարգային պայքար մղելուց:

Ամեն մի կրոն շահագործող դասակարգերի սպասավորուհին է և, թմրեցնելով մասսաների զիտակցութունը, թուլացնում է նրանց կամքը կեղեքողների դեմ մղվող պայքարում: Ամեն մի կրոն խավարի ու տղիտութան պատվարն է, զիտութան թշնամին: Կրոնը քարոզում և պաշտպանում է ստրկութունը: Կրոնը վարձու ստրկութան շղթաները դարձարում է կեղծ ծաղիկներով,

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. VIII, էջ 596, Հայկուսհրատ, 1937 թ.:

<sup>2</sup> «Մարքսիզմի փիլիսոփայութան ուրվագծեր»: Փիլիսոփայական ժողովաբու, ՄԳԲ, 1908, էջ 157:

<sup>3</sup> Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հ. V, էջ 103:

<sup>4</sup> Լենին, Յերկեր, հ. VIII, հայ., էջ 596:

<sup>5</sup> Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 290—291, Հայկուսհրատ, 1937 թ.:

աշխատավորներին «մխիթարում ե» հանդերձյալ կյանքի հուսով: Լենինը յերևելի կերպով ցույց ե տալիս կրոնի ամբողջ նողկալի եյությունը հետեյալ սողերով.

«Ով իր ամբողջ կյանքում աշխատում ե ու կարիքի մեջ ե, կրոնը նրան յերկրային կյանքում հեղություն ու համբերություն ե ուսուցանում, մխիթարելով նրան յերկնային հատուցման հուսով: Իսկ նրանց, ովքեր ուրիշի աշխատանքով են ապրում, կրոնը բարեգործություն ե ուսուցանում յերկրային կյանքում, նրանց արդարանալու շատ եփանդին միջոց առաջարկելով իրենց շահագործական ամբողջ գոյության համար, և ձեռնառու գնով յերկնային բարեկեցության տոմսեր ծախելով: Կրոնը ժողովրդի հաշիչն ե: Կրոնը հոգևոր ողու մի տեսակն ե, վորի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, փոքրիշատե մարդավայել կյանքի իրենց պահանջը»<sup>1</sup>:

Խորապես իրավացի յեր Լենինը, յերբ Լուսաչարսկու աստվածաշինարարական ասույթները նա վորակում եր իբրև «խայտառակ բաներ»: Աստվածաշինարարները գեղազարդում եյին սեակիցիոն տերտերականությունը, գործով պաշտպանում եյին նրան, ջանում եյին նրան ամրապնդել «նոր կրոնի» իրենց քարոզով:

Աստվածաշինարարներն աստծու կրողներ եյին հայտարարում «կոլեկտիվ մարդկությունը»: Լուսաչարսկին մարդկանց հայտարարում եր «անոգ աստծու ատմներ»:

Աստծուն Լուսաչարսկին հրամցնում ե ավելի խորամանկ, ավելի դժվար մերկացնելի, ուստի և ավելի վտանգավոր ձևով, քան քրիստոնեական կրոնը: Նրա մտտ աստված ե հանդիսանում «ամենադեհությունը, ամենայերանությունը, ամենազորությունը, համապարիակ, հավիտենական կյանքը—դա իրոք ամբողջ մարդկությունն ե բարձրագույն պոտենցիայով»:

Իր «Աթելիզմ»<sup>2</sup> հոդվածում նա գործում ե յեկեղեցական Փրագներով. «յեկեցե արքայություն աստուծո», «յեղիցի կամք նորա», «սուրբ յեղիցի անուն նորա»: Նա յերեակայում եր, թե այդ Փրագներում արտահայտվում ե մարդու հաղթանակը բնության նկատմամբ: Իսկ իրականում նա ձայնակցում եր սեակիցիոն տերտերականությանը:

Լենինը, մատնանշելով, թե ինչումն ե աստվածաշինարարու-

կան այդ թիվածքի սեակիցիոն եյությունն ու քաղաքական վնասը, գրում եր Ա. Մ. Գորկուն.

«...դուք ներկել եք, շաքարոտել եք կղերականների, Պուրիշկելիչների, Նիկոլայ II-ի և պ. պ. Սարուսկների գաղափարը, վորովհետև իրականում Աստու գաղափարը նրանց ոգնում ե՝ ժողովրդին սարկության մեջ պահելու: Գեղազարդելով Աստու գաղափարը, Դուք գեղազարդել եք այն շղթաները, վորոնցով նրանք շղթայում են խավար բանվորներին ու մուժիկներին: Տեսեք—կասեն տերտերներն ու Բնկ.—վորքան լավն ու խորն ե այս գաղափարը (Աստու գաղափարը), ինչպես խոստովանում են նույնիսկ «ձեր», պ. պ. դեմոկրատները, առաջնորդները,—և մենք (տերտերներն ու Բնկ.) ծառայում ենք այդ գաղափարին»<sup>1</sup>:

Լուսաչարսկին ասաջարկում եր աստվածացնել «մարդկության բարձրագույն պոտենցիաները»:

Մարքսն ու Ենգելսը իր ժամանակին մերկացրել են Կրիզեյի վորձերը՝ աստվածացնելու մարդու գղացմունքները: Կրիզեն խոսում եր կոմունիստներին՝ դեպի ընդհանրությունն ունեցած աստվածային ձգտման մասին, նրանց ներքին կրոնի մասին: «Մանիֆեստ Կրիզեյի դեմ» աշխատության մեջ Մարքսն ու Ենգելսը մատնանշում եյին, վոր ամեն մի կրոն, այդ թվում նաև կոմունիզմի ցուցանակի տակ Կրիզեյի հրամցրած կրոնը, միանգամայն հետևողականորեն վերջանում ե «մարդու ինքնապղծմամբ», «անարդ սարկական ստորացումով»: Գողարկիլելով մարդուն սիրելու բարձր Փրագներով, Կրիզեն քարոզում եր ստորաքարչություն և արհամարհանք դեպի մարդու անձը:

Մարքսն ու Ենգելսը, մերկացնելով Կրիզեյին, գրում եյին. «Այնպիսի ուսմունքը, վոր քարոզում ե ստորաքարչության յերանություն և արհամարհանք իր իսկ հանդեպ, միանգամայն սահմանում ե քաջարի... կուսակրոններին, բայց յերբեք չի սաղում յանանդուն մարդկանց՝ առանձնապես պաշքարի ժամանակ»<sup>2</sup>:

Լուսաչարսկին աստվածացնելով մարդկային գղացմունքները, իրապես թքակոծում եր դրանք:

Միայն դատակարգային պայքարում, կրոնի ու ամեն տեսակ խավարամոլության դեմ մղվող պայքարում ինչպես հարկն և ծաղկում են մարդկային գղացմունքները: Այս բանը մենք տեսնում ենք Խորհրդային Միության որինակով, յերբ սոցիալիստա-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. VIII, Հայկուհրատ, էջ 595—596:  
<sup>2</sup> «Մարքսիզմի փիլիսոփայության ուրվագծեր»: Փիլիսոփայական ժողովածու, ռուս. հրատ., ՄՊԲ, 1908, էջ 159:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XVII, էջ 84:  
<sup>2</sup> Կ. Մարքս և Գ. Ենգելս, Յերկեր, 4. V, էջ 106:

կան շինարարութեան, դասակարգային պայքարի ընթացքում, հաղթահարելով կապիտալիզմի մնացուկներն իրենց դիտակցութեան մեջ, աշխատավոր մասսաները Լենինի—Ստալինի կուսակցութեան ղեկավարութեամբ դաստիարակում են այնպիսի սքանչելի զգացմունքներ, ինչպես խորհրդային հայրենասիրութեան զգացմունքը, ատելութունը դեպի ամեն տեսակ տրոցկիստական—բուխարինական քրեիկները և ժողովրդի մյուս թշնամիները, սիրո զգացմունք դեպի աշխատավոր մարդկութունը: Ամեն մի կրօն մարդու մեջ դաստիարակում է խոնարհութեան, հնազանդութեան, պասսիվութեան ստրկական զգացմունքներ: Կրօնը սրբազործում է այնպիսի հարաբերութեաններ, վորոնց մեջ աշխատավոր մարդը հանդիսանում է նվաստացած, արհամարհված, ստրկացված ելակ:

Մարքսը «Հեգելի» իրավունքի փելիսոսիայութեան քննադատութեան առթիվ» աշխատութեան մեջ գրում է. «Կրօնը այն մարդու ինքնադիտակցութեանն ու ինքնազգացումն է, վորը կամ դեռևս չի դուրս եկել, կամ կրկին արդեն կորցրել է իրեն»<sup>1</sup>:

Մախիստ Բոգդանովը ջանում էր ապացուցել, վոր իբր թե աստվածաշինարարութեանը պրոզրեսիվ է աստվածորոնման համեմատութեամբ: Ի հակադէպ սրան Լենինը ցույց տվեց, վոր աստվածաշինարարները, հանդիսանալով պրոլետարիատի վրա բուրժուական ազդեցութեան տարածողներ, ըստ էութեան բնավ վոչնչով չեն ին տարբերվում աստվածորոնողներից:

«Աստվածորոնումը,—գրում էր Լենինը,—աստվածաշինարարութեանից կամ աստվածատեղծումից կամ աստվածակերտումից և այլն տարբերվում է ամենևին վոչ այլևի, քան դեղին սատանան» կապույտ սատանայից»<sup>2</sup>:

Լենինը դեն էր շարտում աստվածաշինարարութեան պրոզրեսիվութեան մասին խոսելու ամեն մի փորձ: Ըստ Լենինի «...ամեն մի աստվածիկ դիմադրութեանն է, լինի դա ամենուրեք, խրեալական, վոչ վորոնելի, այլ կառուցվող աստվածիկ, միևնույն է...»<sup>3</sup>:

Աստվածաշինարարներն իսկական տերտերներից հարյուր անգամ այլևի վատ էլին վարվում, դրողվելով դադափարական դիմադրութեամբ, մի աստձու փոխարեն հորինելով մյուսը: Լենինը,

բացահայտելով աստվածաշինարարութեան ամբողջ դարչելութեանը, գրում էր. «Միլիոնավոր ֆիզիկական մեղքեր, զազրելութեաններ, բռնութեաններ ու վարակներ շատ այլևի հեշտ է յերևան հանում ամբողջ, ուստի և շատ այլևի քիչ վտանգավոր են, քան աստվածիկի նուրբ, հոգևոր, ամենաչքեղ «գաղափարական» զգեստներ հաղած դադափարը»<sup>1</sup>: Ֆարաշավոր տերտերին այլևի հեշտ է քողպերձ անել մասսայի առջև, քան «դեմոկրատական», անֆարաջա տերտերին:

Լենինը ցույց տվեց, վոր աստվածաշինարարութեանը մեղշանական ինքնաթքակոծման վատթարագույն տեսակն է: Աստվածաշինարարութեան մեջ մեղշանինը հայում է «իբ «յեսի» ամենակեղտոտ, բութ, ճորտական գծերը կամ գծիկները», վորոնց աստվածացնում է աստվածաշինարարութեանը:

Վոչ անհատական, այլ հասարակական տեսակետից ամեն մի աստվածաշինարարութեան «հուսահատված և հոգնած ֆիլիստերների ու մանր բուրժուակաների ցնորական «ինքնաթքակոծման», բութ մեղշանութեան, փխրուն քաղքենիութեան հենց սիրային ինֆեհայեցույթյունն է»...<sup>2</sup>:

Լուսաչարսիկին հանդես էր գալիս կրօնն իրեն գերբնականի հավատ բնորոշելու դեմ, նա կրօնը հայտարարում էր հավիտենական ու անանցողիկ<sup>3</sup>:

Բոգդանովը կրօնը համարում էր պրոզրեսիվ գործոն: Նրա կարծիքով, կրօնը կոլեկտիվ կազմակերպման նպատակահարմար ձև է: Բոգդանովը սաշտպանում էր կրօնական խավարամոլութեանը, փորձելով մերձեցնել դիտական և կրօնական աշխարհայացքը:

Մերկացնելով Բոգդանովի ու Լուսաչարսիկու իդեալիզմն ու օեակցիոն աստվածաշինարարութեանը, վորոնք կոլեկտիվ մարդկութեանն անվանում էլին աստված, «գաղափարների կոմպլեքս, վորոնք արթնացնում ու կազմակերպում են սոցիալական զգացմունքներ», Լենինը գրում էր.

«Սխալ է, թե Աստված գաղափարների կոմպլեքս է, վորոնք արթնացնում ու կազմակերպում են սոցիալական զգացմունքներ: Դա բոգդանովյան իդեալիզմ է, վորը մարդուրում է գաղափար»

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XVII, էջ 82:  
<sup>2</sup> Նույն տեղում:  
<sup>3</sup> Լուսաչարսիկ, Կրօնը և սոցիալիզմը, 1-ին մաս, էջ 40, 42, 227: ՍՊԲ, 1908:

<sup>1</sup> Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հ. I, էջ 399:  
<sup>2</sup> Լենին, Յերկեր, հ. XVII, էջ 81:  
<sup>3</sup> Նույն տեղում:

ների նյութական ծաղումը: Աստված է՝ (սրատականորեն ու կեն-  
ցաղորեն) ամենից առաջ գաղափարների կոմպլեքս, վորոնք առա-  
ջացել են մարդու բուժ ճնշվածութեամբ թե՛ արտաքին բնությու-  
նից և թե՛ դասակարգային կեղեքումից, — գաղափարների, վորոնք  
ամրապնդում են այդ ճնշվածությունը, քննցնում են դասակար-  
գային պայքարը»<sup>1</sup>:

«Այժմ թե՛ Յեկրոպայում և թե՛ Ռուսաստանում ամեն մի,  
նույնիսկ ամենանրբին, ամենաբարեմիտ պաշտպանությունը կամ  
արդարացումը աստծու գաղափարի՝ հանդիսանում է ռեակցիայի  
արդարացում»<sup>2</sup>:

Աստծու գաղափարը յերբեք չի կազմակերպել սոցիալական  
զգացմունքներ, նա դրանք քննեցրել է ու բթացրել: Կրոնը միշտ  
քարոզել է «կեղեքիչների աստվածայնություն», կրոնը միշտ յե-  
ղել է ամենամատթարագույն սարկության գաղափար:

Մարքսի տված՝ կրոնի վորոշումն իբրև «ժողովրդի հաշիշի»  
հանդիսանում է կրոնի վերաբերյալ մարքսիստական-լենինյան  
ուսմունքի անկյունաքարը: Ձարգացնելով կրոնի այս վորոշումը,  
լենինն իր «Սոցիալիզմը և կրոնը» հոդվածում գրել է.

«Կրոնը հոգևոր ճնշման մի տեսակն է, վոր ամենուրեք և  
ամեն տեղ ծանրացած է ուրիշների համար կատարած հավիտե-  
նական աշխատանքի, կարիքի ու մենակության տակ ճգմված ժո-  
ղովրդական մասսաների վրա: Ես հագործողների դեմ մղած պայ-  
քարում շահագործող դասակարգերի անդրությունը նույնպես  
անխուսափելիորեն հանդերձյալ լավագույն կյանքի հաշիւա են  
ծնում, ինչպես բնության դեմ մղած պայքարում վայրենու անդո-  
րությունն աստվածների, սատանաների, հրաշքների և այլ բաների  
հաշիւա է ծնում»<sup>3</sup>:

Աստվածաշինարարության մոլի պրոպագանդիստների թվում  
հանդես էր գալիս Բազարովը (1930 թվին դատապարտված  
մենչևիկների հակահեղափոխական կազմակերպության գործով):  
Քոչելով մենչևիկների բանակը, Բազարովը համերաշխվում էր  
բացահայտ տերտերականություն քարոզող բուրժուական փելիսո-  
փաների հետ: Նա գոյեբղում էր Տոլստոյին, իբրև «նոր կրոն»  
ստեղծողի: Լենինը «Герои «оговорчики»» հոդվածում (XV հ.)

Բազարովի հայացքները անվանում էր «ամենամաքուր վեխակա-  
նություն», շողջորթություն հանդեպ քաղքենիության:

Տոլստոյի կրոնական քարոզի մասին Լենինն ասում էր, վոր  
դա «ամենանողկալի բաներից մեկի... կրոնի քարոզ է, ձգտումն  
է պետական պաշտոնով տերտերների տեղը դնելու բարոյական  
համոզումով տերտերներ, այսինքն՝ զարգացնելու-տարածելու  
ամենանրբին, ուստի և առանձնապես գարշելի տերտերականու-  
թյուն»<sup>1</sup>: Լենինը Ա. Մ. Գորկուն գրած նամակում ընդգծում է,  
վոր «... Տոլստոյին վո՛չ «պասսիվիզմ», վո՛չ անարխիզմ, վո՛չ  
նարոնչիկություն, վոչ կրոն ներել չի կարելի»<sup>2</sup>: Բազարովի որե-  
նակով յերևում է, թե ինչպես աստվածաշինարարները գեղազար-  
դում էին տերտերականության այն քարոզը, վոր տեղի ունեւր  
Տոլստոյի յերկերում:

Մենչևիկ Յուշկեվիչը հանդես յեկավ իբրև Լուսնաչարսիու  
աստվածաշինարարության պաշտպան, հայտարարելով, վոր աստ-  
վածաշինարարության մեջ զգացվում են «ինչ-վոր հարկավոր բա-  
նի վորոնումներ»: Յուշկեվիչը մի շարք հոդվածներում հանդես էր  
գալիս աստվածաշինարարության քարոզով, ասելով, վոր կոչեկ-  
տիվ զգացմունքները կրոնական բնույթ են կրում: Յուշկեվիչը քա-  
րոզում էր ուղղակի տերտերականություն, յերբ մարդկային բա-  
նականության կողքին դնում էր «Լոգոսը»<sup>3</sup>:

Աստվածաշինարարները, ցանկանալով դժվարացնել Լենինի  
պայքարը տերտերականության դեմ, առաջադրում էին այն թե-  
զիսը, թե կուսակցության նկատմամբ կրոնն իբրև թե մասնավոր  
գործ է: Իսկ Լենինն ընդգծում էր, վոր կրոնը մասնավոր գործ  
պիտի լինի վոչ թե կուսակցության նկատմամբ, այլ պետության  
նկատմամբ: Մեր կուսակցությունն անտարբեր չէ դեպի «խավա-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XII, էջ 332:

<sup>2</sup> Լենին, Յերկեր, հ. XV, էջ 58:

<sup>3</sup> Մենչևիկուհի Լ. Ակսելրոզը (Որթողբս) մի շարք հոդվածներում իրեն  
հայտարարում էր աստվածաշինարարության հակառակորդ: Բայց նա այնպիսի  
հայացքներ էր արտահայտում, վորոնց տակ կատորգրեր ամեն մի աստվածա-  
շինարար: «Կարլ Մարքսը և կրոնը» հոդվածում («Против идеализма» ժող.,  
էջ 68, 1933 թ.) Ակսելրոզը կրոնն անվանում է «հին տրադիցիաների, ժողո-  
վրդական սովորությունների, իրավական նորմաների, բարոյական պատվե-  
րանների հոգատար պահպան»: Ակսելրոզը պնդում է, վոր կրոնը իբրև թե  
սերտ կապված է արվեստի հետ և համախմբում ու միավորում է մարդկանց:  
Ակսելրոզը կրոնի՝ իբրև ժողովրդի հաշիշի վերաբերյալ մարքսիստական դրույ-  
թը սեվիզիայի յե յենթարկում:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XVII, էջ 85:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Լենին, Յերկեր, հ. VIII, հայ., էջ 595:

բամբուլթյունը, ինչպես կրոնական հավատալիքներն են»<sup>1</sup>: Կուսակցութիւնը վճռականորեն պայքարում է «բանվորները կրոնական ամեն մի հիմարացման դեմ»<sup>2</sup>: Լենինն ընդդժում էր, վոր մեր պրոպագանդան կրոնի դեմ՝ կառուցված է մատերիալիստական աշխարհայեցողութեան վրա, վոր կրոնի դեմ մղվող պայքարը ստորադասված է դասակարգային պայքարի խնդիրներին ընդդեմ շահագործողական հասարակարգի, ընդդեմ կապիտալի տիրապետութեան, հանուն աշխատավորների ազատագրման ստրկութեան բոլոր ձևերից:

Լենինը պարզաբանում է՝ աշխատավորական լայն մասսաներին հեղափոխական պայքարի պրակտիկայի մեջ զբաղելու անհրաժեշտութիւնը: Նրա կարծիքով, «բանվորական մասսաների դասակարգային պայքարն է միայն... ի վիճակի կեղեքված մասսաներին իրոք ազատելու կրոնի ճնշումից...»<sup>3</sup>:

Լենինը պայքարում էր կրոնի դեմ պատերազմի մասին յեղած անարխիստական Փրագի դեմ, մատնանշելով, վոր դեռևս ենդելսը խիստ քննադատում էր Դյուրինգին կրոնն որենադրական կարգով արգելելու նրա առաջարկի համար: Լենինն ընդդժում էր, վոր անհրաժեշտ է մասսաներին համբերատար կերպով պարզաբանել մարքսիստական աշխարհայացքի հիմունքները, կրոնի դասակարգային արմատները, նրա կապերը շահագործող դասակարգերի հետ, խավարի ու տգիտութեան հետ:

Ավելի զարգացնելով մարքսիստական թեորիան, բարձրացնելով այն ավելի բարձր աստիճանի, Լենինը ցույց տվեց իդեալիզմի և կրոնի սերտ կապը: Լենինը ցույց տվեց, վոր իդեալիզմը նրբացրած տերտերականութունն է, վոր իդեալիզմը—«...ճանապարհ է դեպի տերտերականութուն մարդու անհունորեն բարդ (դիալեկտիկական) իմացութեան յերանգնելից մեկի միջոցով»<sup>4</sup>:

Լենինը յերևան հանեց աստվածաշինարարութեան սերտ կապը մախիստական իդեալիստական փիլիսոփայութեան հետ:

Մերկացնելով աստվածաշինարարներին, Լենինը ցույց տվեց, վոր նրանք նոր կրոնի իրենց խայտառակ քարոզը յեղրակացրել են մախիստական իդեալիստական փիլիսոփայութեան հիմ-

նական դրույթներից: Աստվածաշինարարները պատահաբար չէ, վոր կառչեցին մախիստական փիլիսոփայութեան: Ռեակցիայի ժամանակաշրջանի դժվարութիւնները վախեցած մանր բուրժուական ինտելիգենտների շրջանում կար իսկական մախիստական համաճարակ: Բողոքանովի, Լունաչարսկու և մյուսների կողմից մարքսիզմի դրոշակի տակ մատուցվող մախիստական փիլիսոփայութիւնը հարմար գործիք էր նրբացրած տերտերականութուն ներս քաշելու համար և հանդիսանում էր պրոյեստրիպտի վրա բուրժուական ազդեցութեան ձևերից մեկը: Բուրժուազիան, գործադրելով բանվորներին խարելու և անբարոյացնելու լիբերալ մեթոդները, ձգտում էր նորոգել ու կենդանացնել կրոնը վոչ-միայն անմիջականորեն, այլև մախիստական փիլիսոփայութեան տարածման միջոցով:

Աստվածաշինարարները հայտարարեցին «իսկական արշավ մարքսիզմի փիլիսոփայութեան դեմ»: Բողոքանովը, Լունաչարսկին և այլք 1908 թ. լույս ընծայեցին մի ժողովածու «Մարքսիզմի փիլիսոփայութեան ուրվագծեր» անունով: Լենինն ամենավճռական պայքար մղեց մախիստական այդ տերտերականութեան դեմ:

1908 թ. մարտի 24-ին Ա. Մ. Գորկուն ուղղած նամակում Լենինը գրում է, վոր Բագարովի, Բողոքանովի և Ընկ. զերբը («Մարքսիզմի փիլիսոփայութեան ուրվագծեր») — «ալքոզուրյալք, սկզբից մինչև վերջն անհեթեթ, վնասակար, ֆիլիստերական, տերտերական ե...»<sup>1</sup>:

Վ. Վորովսկուն 1908 թ. հուլիսի 1-ին գրած նամակում Լենինը նախադրուշացնում էր Բողոքանովի հետ վերահաս պառակտման մասին և մատնանշում էր, վոր աստվածաշինարարները կանգնած են մախիստական-բոյկոտիստական հողի վրա:

1908 թ. ամառը Լենինը հանձնարարում էր ուղղելի Իոսիֆ Յյոդորովիչ Դուբրովինսկուն, — վորի մասին ընկեր Ստալինը գրում էր, վոր նրանով, և Յա. Մ. Սվերդլովով, մեր կուսակցութիւնը «կարող է և պետք է հպարտանա», — հանդես դալ իբրև ուղղորդող Բողոքանովի ուժերատին: Լենինն իբրև ուղևութուն Դուբրովինսկուն՝ գրեց «Տաս հարց ուժերենախին», ընդվորում Ց-րդ հարցում նշում է, վոր-Մախը—Բողոքանովի և նրա բարեկամների ուսուցիչը—միանում է Եուզպիյի՝ «տերտերականուրյան պաշտպանի և առհասարակ փիլիսոփայութեան մեջ բացահայտ ուսուցիչների» ակնհայտ իդեալիստական փիլիսոփայու-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. VIII, հայ., էջ 598:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Լենին, Յերկեր, 4. XIV, էջ 60:

<sup>4</sup> Լենին, Յերկեր, 4. XIII, հայ., էջ 428:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XXVIII, էջ 535:

թյանը: Մրանով իսկ Լենինն ընդգծում էր, վոր թե՛ Բողղանովը, թե՛ Լուճաչարսկին և մյուսները, հանդիսանում էյին, ինչպես և Մախը, «տերտերակամուքյան պաշտպաններ»:

10-րդ հարցում Լենինն ուղղակի մատնանշում է, վոր «...մախիզը ընդհանուր վոչինչ չունի բոլշևիզմի հետ»:

«Правда» լրագրի 1937 թ. մայիսի 9-ի համարում Դուբրովինսկու վերաբերյալ հոդվածում մեջ է բերվում ցարական արտասահմանյան դորձակալության հետևյալ հաղորդումը վոստիկանական դեպարտամենտին՝ այդ յերույթի մասին. «Որերս ժընեվում, «բոլշևիկները» խմբում տեղի ունեցավ հետևյալ սկանդալը. Բողղանովի ունեցածը, վոր բանավիճում էր Պլեխանովի հետ, հանդես յեկավ «իննուկներին», Կենտրոնական Կոմիտեյի և «Пролетарий»-ի խմբադրության անդամը, և հայտարարեց իր ու Լենինի անունից, վոր բոլշևիզմը ընդհանուր վոչինչ չունի Բողղանովի փիլիսոփայական ուղղության հետ (եմպիրիոմոնիզմի հետ) ...»:

Ռուսական մախիստների դեմ պատերազմի բացահայտ հայտարարություն է համարում Լենինը իր «Մարքսիզմ և սոցիալիզմի միջոցով» հոդվածը, վորը նա գրել է 1908 թ. ապրիլին: Այս հոդվածում Լենինը հայտարարում է, վոր տեքստում նեոկանտյան սոցիալիզմի սկզբնական մասին ասված բոլոր բաներն ըստ ելույթյան վերաբերում են նաև նոր սոցիալիզմի սկզբնականներին, վորպիսիք հանդիսանում էյին ուսումնասիրողները:

Լենինը հրատարակեց մեկնել բացատրության Բողղանովի և մյուսների հետ: Լենինը գրում էր. «...այնպիսի մարդկանց հետ, վորոնք սկսել են քարոզել գիտական սոցիալիզմի միացումը կրոնի հետ, յես չեմ կարող խոսել և չեմ խոսի»<sup>1</sup>:

Այսպիսով, Լենինը բազմիցս ընդգծում էր Բողղանովի, Բազարովի, Լուճաչարսկու փիլիսոփայական արտահայտումների տերտերական բնույթը:

\* \* \*

1908 թ. սեպտեմբեր—հոկտեմբերին Լենինն ավարտեց իր հոդվածները «Մատերիալիզմ և եմպիրիոմոնիզմի միջոցով» գիրքը, վորի մեջ նա ավել է մախիզմի և այլ հակամատերիալիստական հոսանքների բազմակիզմանի, ջախջախիչ քննադատությունը և

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XXVIII, էջ 560:

մարքսիզմի փիլիսոփայությունը հասցրեց նոր, բարձրագույն աստիճանի:

«Մատերիալիզմ և եմպիրիոմոնիզմի միջոցով» աշխատության մեջ Լենինը փայլուն կերպով բացահայտեց, թե ինչպես մախիզմը (եմպիրիոմոնիզմի միջոցով) իրեն հիմք ծառայեց Լուճաչարսկու, Բազարովի և մյուսների աստվածաշինարարության: Ռուսական մախիստները խրվեցին իդեալիզմի, այսինքն ջրիկայված ֆիդեիզմի մեջ: Պայքարելով մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, մախիստները հաճոյակատարություն էյին անում ֆիդեիստներին, մոլի սեպիտիստներին, վորոնք առավելություն տալիս էյին հավատին՝ հանդես գիտության:

Լենինը աստվածաշինարարության որինակով փայլուն կերպով ցույց տվեց, վոր ամեն մի իդեալիզմ, այս թվում նաև մախիզմը (ինչպես արտասահմանյան, այնպես էլ ռուսական), հանդիսանում է նրբացրած տերտերականություն և ճանապարհ դեպի տերտերականությունը:

Նա, ով հանդես է դալիս մարքսիզմի փիլիսոփայության դեմ, հանդես է գալիս ընդդեմ գիտության, հանուն կրոնի:

Գիտելիտիկական մատերիալիզմը Լենինի—Ստալինի կուսակցության աշխարհայացքն է: Նա անհաշտելի յե վորեւե իդեալիստական և կրոնական հայացքի հետ: Մարքսիզմ—լենինիզմը մարտնչող աթեիզմի հիմնավորումն է: Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը հիմք է վերցնում մատերիան, իրեն սոցիալիզմի սկզբնականություն, վոր գոյություն ունի գիտակցությունից դուրս ու անկախ և անդրադառնում է նրա մեջ: Մարքսիզմը ժխտում է տերտերական հեղինակները աշխարհն աստծու կողմից ստեղծված լինելու մասին, ընդունում է, վոր աշխարհը նյութական է իր բնությամբ և վորեւե արարիչ—աստծու կարիք չունի: Մատերիան առաջնային է: Նա հանդիսանում է զգայությունների, մտապատկերների, գիտակցության աղբյուր: Գիտակցությունը, մտածությունը հանդիսանում է բարձր կազմակերպված մատերիալի—ուղեղի հատկությունը: Մատերիալիզմը հենվում է գիտության վրա, իսկ ամեն մի առաջավոր, իսկական գիտություն բացասում է կրոնը:

Իդեալիզմը տերտերականության քողարկված, վարադուրված ձևն է: Իդեալիստները սնվում են, վոր մատերիան, բնությունը, կեցությունը սոցիալիզմի սկզբնականությունն է ներկայացնում և վոր նյութական աշխարհը, կեցությունը, բնությունը գոյություն

ունեն միայն մեր դիտակցութեան մեջ, մեր զգայութեաններում, մտապատկերներում, հասկացողութեաններում: Քանի վոր իղեալիսաները սնուում են, թե մոզին գոյութեան ե ունեցել բնութեանից առաջ, նրանք վերլինելով, այս կամ այն ձևով, կընդունեն աշխարհի ստեղծագործութեանը: Այս բանը բազմիցս մատնանել են Մարքան ու Յնգելը: Որինակ, Յնգելն իր «Լուզվից Ֆոյերբախ» աշխատութեան մեջ մասնանշում է, վոր արդեն միջին դարերում մտածութեան և կեցութեան հարաբերութեան հարցը, այսինքն այն հարցը, թե ինչն է հիմք կազմում—վոզին, թե բնութեանը,—«ընդունեց հարցի ամենի կտրուկ ձևը, թե արդյոք աստիճան է ստեղծել աշխարհը, թե վերջինս գոյութեան ունի իսկզբանէ»<sup>1</sup>:

Գերմանական իղեալիստ Հեգելն մոտ աշխարհի այս ստեղծագործութեանն ելալի խառնաշփոթ ու անհեթեթ ձև և ընդունում, քան քրիստոնեական կրոնի մեջ: Մտածութեանն անջատելով մատերիալից, պնդելով, թե մտածութեանը գոյութեան ունի մինչև մատերիան, մատերիալից առաջ, իղեալիստները ներս են քաշում աշխարհն աստու կողմից ստեղծված լինելու միայն: Յուրաքանչյուր իղեալիստ, ինչքան ել նա քողարկել իր հայացքները, յերբեմն ծածկվելով նույնիսկ ամբիատի դիմակով, մարդու զգայութեանը, գիտակցութեանը, մտածութեանը անջատում է բուն մարդուց, բացառում է մատերիան իրրև որչեպիտլ ուսալականութեան և դրանով իսկ հանդիսանում է տերտերական հայացքների պաշտպան: Մարքան ու Յնգելն այս բանն ընդգծում են հետևյալ խոսքերով. «Ի՞նչո՞ր իղեալիստները, ինչպես փիլիսոփայական, այնպես ել կրոնական, ինչպես հին, այնպես ել նոր, հավանում են նաև դայտյան, հայտնութեան, փրկիչներին, հրաշագործներին, և նրանց կրթութեան ստատիճանից է միայն կախված այն, թե այս հավատը կապիտ, կրոնական ձև է ընդունում, թե լուսավորյալ...»<sup>2</sup>:

Լենինն իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» հանձարեղ աշխատութեան մեջ և ուրիշ յերկերում փայլուն կերպով ցույց է առել, վոր իղեալիստն անպայման դալիս է աստու մոտ: XVIII դ. անդլիական յեպիսկոպոս Բերկլին, վոր քարոզում եր անակցիոն իղեալիստական փիլիսոփայութեան, հիանալի հասկանում եր, վոր փիլիսոփայական մատերիալիզմը թշնամի յե կրո-

նին, և կատարի պայքար եր մղում մատերիալիզմի դեմ: Նա գրում եր, վոր ամբիատների գլխավոր հենարանը մատերիալի ընդունումն է իրրև որչեպիտլ ուսալականութեան, և բացահայտորեն հայտարարում եր, վոր ինքը մտադիր է փիլիսոփայութեանից վտարել մատերիան: Ուղղակի ու բացահայտորեն պաշտպանելով կրոնը, Բերկլին գրում եր, վոր աշխարհը, բնութեանը համակցութեան է գգայութեանների, «վոր մեր մտքում հարուցում է աստիճանութեանը»:

Մերկայնելով Բողանովին, Լունաչարսկուն, Յուչկիվիչին և մարքսիզմի մյուս հակառակորդներին, Լենինը գրում եր, վոր ուսական մախիստներն ըստ ելութեան վոչնչով չեն տարբերվում Բերկլից: Նրանք, Բերկլիի նման, ուղում ելին մատերիան հեռացնել փիլիսոփայութեանից, բայց սա անում ելին վոչ թե աղնվորեն ու բացահայտորեն, այլ կեղծախորհրդով, քողարկված, յերկերտանիտրեն,—իրենց անվանելով մարքսիստներ:

Բերկլին չեր թաղցնում իր կրոնական հայացքները: Թուսական մախիստները տերտերականութեանը ներս ելին քաշում քողարկված ձևով:

Լենինը ցույց տվեց, վոր նոր կրոն («աստիճանորոնում», «աստիճանաշինարարութեան») ստեղծելու քարոզը բղխում է մախիստական իղեալիստական փիլիսոփայութեանից, վորը պաշտպանում ելին Յուչկիվիչը, Բողանովը, Լունաչարսկին և մյուս աստիճանաշինարարները: Մախիզմն այս բոլոր վերատերաբանների համար հանդիսանում եր իրրև թե վորպես «գիտական» փատարկ մարքսիզմի դեմ, ի պաշտպանութեան քողարկված տերտերականութեան, վորպես հարմար գործիք աստիճանաշինարարութեանը ներս խցկելու համար և բուրժուական ազդեցութեանը պրոլետարիատի վրա տարածելու ձևերից մեկն եր»:

Մախիստական փիլիսոփայութեանը—ըստ Լենինի— «փիլիսոփայական իղեալիզմի, այսինքն կրոնի նրբացրած պաշտպանութեան տարատեսակն է, և Լունաչարսկին պատահաբար չե այս փիլիսոփայութեանից գլորվել դեպի գիտական սոցիալիզմի և կրոնի միացման քարոզը»<sup>1</sup>:

Լունաչարսկին առաջարկում եր «վրայից դեն գցել գորշ մատերիալիզմի հին թիկնոցը»: «Ամբիզմ» հոդվածում նա գրում եր «մատերիալիզմի ու միատիցիզմի հակադրութեանները վոչնչացնող ներդաշնակ սինթեզի» մասին:

<sup>1</sup> Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, Հ. XIV, էջ 614:

<sup>2</sup> Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, Հ. IV, էջ 632:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, Հ. XVII, էջ 476:

Լուսաչարսկին ինքը՝ իր հիշողութիւններում բազմիցս մատնանշում է, վոր ինքը հրապուրված է մախիստական փիլիսոփայութեամբ:

Լենինը գրում էր. «Այն ամօթալի բաները, վորոնց հասավ Լուսաչարսկին, — բացառութիւն չեն, այլ ճնունդ են և՛ ուսական և՛ գերմանական եմպիրիոկրիտիցիզմի»<sup>1</sup>:

Մախիստներն իրենց սեպտիտն-տերտերական դերը սքողում էին ամեն տեսակ փիլիսոփայական խարդախութիւններով, ձգտելով կոծկել փիլիսոփայութեան հիմնական հարցը, մտածութեան և կեցութեան հարաբերութիւնը: Մախիստները հավատացնում էին, թէ իրենք կանգնած են մատերիալիզմից ու իդեալիզմից «բարձր»: Մախիստներն առում էին, վոր իրենք հիմք են վերցնում վո՛չ թէ մատերիան, վո՛չ թէ գիտակցութիւնը, այլ փորձը, փորձ բառի տակ հասկանալով զգայութիւնները, վորոնք, մախիստների հայացքներով, գոյութիւն ունեն առանց մատերիալի և առանց ուղեղի:

Լենինը ցույց է տալիս, վոր Բոգդանովը, ինչպէս և բոլոր մախիստները, սեվիզիայի յենթարկելով փիլիսոփայութեան հիմնական հարցը, անխուսափելիորեն հասնում է ասածու իդեալին: Բոգդանովը, ջողարկելով «սոցիալապէս կազմակերպված փորձ» բառերով, ներս եր խցկում այսպիսի միտք, թէ Ֆիլիկկական բնութիւնը մարդկանց սոցիալապէս կազմակերպված փորձի անհնցային է: Բոգդանովը խոսքով հրաժարվում էր կրոնից, իսկ գործով, սնդելով, թէ Ֆիլիկկական բնութիւնը մարդկային փորձի անհնցային է, նա հիմնավորում էր տերտերական գաղափարները: Մարքսիզմի տեսակետից բնութիւնը գոյութիւն ունեւ ինչէ փորձը, մինչև մարդկանց գիտակցութիւնը և մինչև իրենց իսկ մարդկանց յերեան դալը:

Բոգդանովը պրոպագանդ անելով մախիզմը, չի կարողանում ծայրը ծայրին հասցնել առանց կրոնի: Յեւ Լենինն այս բանը հիմնալի կերպով բացահայտում է հետևյալ խոսքերով.

«Յեթե բնութիւնը անհնցայլ է, ապա ինքնընտանեցան հասկանալի յէ, վոր կարող է անհնցված լինել վորեւէ այնպիսի բանից, ինչ վոր բնութիւնից ալելի մեծ է, հարուստ, ընդարձակ, հզոր—վորեւէ այնպիսի բանից, ինչ—վոր գոյութիւն ունի, վորովհետեւ բնութիւնն «անհնցելու» համար այդ—ինչը գոյութիւն

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ», էջ 386, Հայ. Բաղ-հրատ, 1930 թ.:

պետք է ունենա բնութիւնից անկախ: Նշանակում է գոյութիւն ունի ինչ—վոր բան բնութիւնից դուրս և այնպիսի բան, վորն անանցում է բնութիւնը: Բուսերն դա կոչվում է ճօր (աստված)»<sup>1</sup>:

Բացասելով մատերիան իրրև որյեկտիվ սեպտականութիւն, Բոգդանովը հետեղականորեն հասնում է ժամանակի ու տարածութեան որյեկտիվութեան բացասմանը և սրանով դոնեղը լայն բացում կրոնի համար, անձնատրվում է տերտերականութեան հանդեպ: Միայն կրոնն է ընդունում ժամանակից ու տարածութեանից դուրս եյակներ: Մարդն ու բնութիւնը գոյութիւն ունեն ժամանակի ու տարածութեան մեջ: Մատերիան չի կարող գոյութիւն ունենալ առանց շարժման, իսկ շարժումը կարող է կատարվել միայն տարածութեան ու ժամանակի մեջ: Ընդունելով ժամանակից ու տարածութեանից դուրս եյակները, Բոգդանովն արդարացնում է հավատը դեպի աստված, ոստանաներ, սնային վողիներ, մի խոսքով, դեպի ամեն մի սատանայութիւն: Լենինը գրում է, վոր «ժամանակից և տարածութիւնից դուրս» եյակները, «վորոնք ստեղծված են տերտերականութեան կողմից և ապավեն են դանում մարդկութեան սպետ և ծեծկված մասսայի յերեակայութեան մեջ, հիլանդոտ Փանտաղիա յեն, փիլիսոփայական իդեալիզմի աչքախարսութիւններ, անպետք հասարակակարգի անպետք արդիւնք»<sup>2</sup>:

Այսպիսով, Լենինը, շարդուելուր անելով Լուսաչարսկու, Բոգդանովի՝ մարքսիզմին արմատապէս թշնամական «իդեալիզմը», ընդգծում էր, վոր մատերիալիզմն անհատելի յէ վորեւէ կրոնի հեա, իսկ փիլիսոփայական իդեալիզմը միշտ այսպէս թէ այնպէս պաշտպանում ու անկեցում է կրոնին: Ամեն մի իդեալիզմ հանդիսանում է սքողված, զարդարված սատանայութիւն, առավել կամ սրական չարիով թուլացրած, ջրիկացրած Ֆիդելիզմ, տերտերականութեան նրբացրած, գտած ձևը: Մախիզմը հանդիսանում է ուղեղի տերտերականութեան նախադուր: Լենինը ցույց տվեց, վոր մախիստների մոտ «փորձ» բառիկի տակ թաղնված է այն տերտերականութիւնը, վոր բացարձակորեն ջարդում էր անդլիական յեպիտոլոգոս Բերկլին մախիստների հանդես դալուց շատ առաջ: Վոչ մի միջին տեղ մատերիալիզմի ու իդեալիզմի միջև:

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ», էջ 251, Հայ. Բաղ-հրատ, 1930 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 260:

լիզմի միջև չի կարող լինել: Մատերիալիզմն անհաշտելի յե վորևե կրոնի հետ: Իդեալիզմը ջրիկացված տերտերականութունն է: Այս բանը պարզ ու համառոտ ցույց տվեց Լենինը 1908 թվին գրած «Եֆերատի սլանում»: Լենինը գրում էր. «Չ գլխ[ավոր] աշխարհ[այացք] և փ[իլիսոփ]ա[յական] յե[լ]ա[կետեր].—տերտերական[նութուն] և մատ[երիալի]զմ»<sup>1</sup>:

Իրողանովը կեղծախորհրդար սնդում էր, վոր իբր թե մատերիական փիլիսոփայության մեջ տեղ չի կարող լինել աստուգադափարի համար:

Աստվածաշինարարներն ամեն կերպ թողցնում էին, վոր մատիզմը հանում է մինչև ուղղակի տերտերականության: Մերկացնելով Լուսաշարսիուն և մյուսներին, Լենինը նշում էր, վոր սրատահական չէ, վոր մարքսիզմի փիլիսոփայության դեմ ուղղված կոչեկտիվ աշխատության մեջ՝ Լուսաշարսիուն հասել է մինչև «մարդկային բարձրագույն ոլոտնեցիաների աստվածացումը», մինչև «կրոնական աթեիզմը»:

Լենինը բացահայտում էր եմպիրիոկրիտիզիզմի դասակարգային դերը, շողոքորթութունը տերտերականության և շահագործող դասակարգերի առջև: Նա մերկացրեց Մախի ու բուրբուրբուրական փիլիսոփաների սիրած այն սնդումը, վոր դեպությանն իբրև թե անկուտակցական է: Գիտության մեջ անկուտակցականության դրոշակով սքողվում է լակեյությունը տերտերականության առջև:

Մախը կրոնը հայտարարում էր «մասնավոր գործ», գրում էր փիլիսոփայության չեղքության մասին այս հարցում: Լենինը մի շարք ցարուն որինակներով ցույց է տալիս այս հայտարարության ամբողջ կեղծութունը: Լենինը նշում է, վոր «...իմամանեաններն ամենամոլի սեակցիոներներ են, Ֆիդելիզմի անվերապահ բարոյիչներ, իրենց խավարամտությամբ ամբողջական մարգիկ»<sup>2</sup>: Այդ սեակցիոներներն ամբողջությամբ համաձայնում են Մախի փիլիսոփայության հետ, գտնելով, վոր վերջինս բավարարում է կրոնի պահանջները:

Մախի աշակերտ Հանս Կոռնելիուսը, վորին Լենինն անվանում է «ուրյադնիկ պրոֆեսորական ամբիոնի վրա», այդ «ուսուցչից նանաչված աշակերտը», հանդում է «անմատարան և

աստուգն»: Մախի մյուս աշակերտ Պետրոլըը հայտարարում է, վոր եմպիրիոկրիտիզիզմը «չի հակասում վո՛չ թեիզմին, վո՛չ աթեիզմին»: Այսպես է բացահայտում Լենինն այդ փիլիսոփաների լակեյությունը տերտերականության առջև:

Աստվածաշինարարներն ամաչում էին թունդ խավարամտներ Ուորդի, Շուպլեյի հետ ունեցած իրենց ցեղակցութունից և թաղցնում էին, վոր Մախն ու Ավենարիուսը, ուսական աստվածաշինարարների ուսուցիչները, ըստ եյության, վոչնչով չէին տարբերվում այդ թունդ խավարամտներից:

Գասկած չկա, վոր Լուսաշարսիուն, հանդես դալով աստվածաշինարարության քարոզով, փոխ էր առել հոգուտ կրոնի նորոգման հանդես յեկող բուրբուրբուրական իդեոլոգիների հիմնական գաղափարները: Իրենց կրոնական հայացքները սքողելով իբր թե դեպական փաստարկներով, մատերիաները և մյուս բուրբուրբուրական փիլիսոփաները խոսում էին ասանց մատերիայի շարժման մասին, այն մասին, վոր իբր թե մատերիան չբացել է:

Լենինն ընդդուում էր, վոր մատերիան իբրև սքեյկտիվ սեակականութուն յերբեք չի չբանում, շարժումը հանդիսանում է մատերիայի անկապտելի հատկութունն իբրև սքեյկտիվ սեակականության, փոխվում են միայն մեր մտապատկերները մատերիայի Ֆիդելիական հատկութունների մասին, վորոնք յերեկ շատ գեղանականների անփոփոխ էին թվում: Մատերիայի՝ իբրև սքեյկտիվ սեակականության՝ փիլիսոփայական հատկացողութունը յերբեք չի կարող հանալ:

Լենինը Ա. Մ. Գորկուն ուղղած նամակում գրում էր. «...մի կույտ ժամանակակից ամենասականավոր Ֆիդելիաներ ուղեումի, ելեկտրոնների և այլոց «հրաչնների» ապրիլ ներս է բաշում աստվածիկը—և՛ ամենակույտ, և՛ ամենանուրբ աստվածիկը՝ փիլիսոփայական իդեալիզմի ձևով»<sup>3</sup>:

Լենինը վոչ միայն փայլուն կերպով ցույց տվեց, մերկացնելով մատիզմն ու աստվածաշինարարութունը, վոր ամեն մի իդեալիզմ հանդիսանում է նրբացրած տերտերականութուն, Լենինը վոչ միայն բացահայտեց ինչպես արտասահմանյան, այնպես և ուսական եմպիրիոկրիտիզիզմի գաղափարային դերը, այն է—շողոքորթութունը շահագործող դասակարգերի ու կրո-

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXV, էջ 122:

<sup>2</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիզիզմ», էջ 232. Հայ. Քաղ-հրատ, 1939 թ.:

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիզիզմ», էջ 388. Հայ. Քաղ-հրատ, 1939 թ.:

<sup>2</sup> Լենին, Յերկեր, 4. XVI, էջ 328:

նական խաղաքամոլները առջև, — Լենինն աստվածաշինարարութեան որինակով ցույց տվեց, վոր իդեալիզմը մանապարհ է դեպի տերտերականութիւն:

Լենինը, ավելի զարգացնելով մարքսիզմը, յերևան հանեց իդեալիզմի ու կրօնի գնոսեոլոգիական (թեորիական—իմացաբանական) արմատները. վերլուծելով մարդկային իմացութեան պրոցեսը, Լենինը մատնանշում էր, վոր մարդու իմացութիւնը դիալեկտիկական բարդ պրոցես է: Նա ընթանում է վոչ թե ուղիղ դժով, այլ բարդ, կոր դժով՝ ստորինից դեպի բարձրագույնը: Մարդու՝ պրակտիկայով ստուգված զգայութիւններն ու հասկացողութիւնները տալիս են որչեւտիով աշխարհի զարգացման ավելի ու ավելի ճիշտ պատկերը:

Իսկ յեթե մարդը հիմք վերցնի վոչ թե ուսուցիչականութիւնը, այլ ուսուցիչականութեան իրականութեանը, ապա սա թերում հասցնում է իդեալիզմին և կրօնին: Լենինը գրում է.

«Մարդու իմացութեան յերկատումը և իդեալիզմի (==կրօնի) հնարավորութիւնը արդեն տրված են առաջիկ տարրական աբստրակցիայի մեջ «տուն» առհասարակ և առանձին տներ»<sup>1</sup>

Մարդկային իմացութեան մեջ—ըստ Լենինի—զոյութիւն ունի «...աբստրակտ հասկացողութիւնը, իդեան փանտազիայի (վերջին հաշիւով—աստծու) վերածելու հնարավորութիւնը»<sup>2</sup>:

Գիտութեան, քաղաքականութեան մեջ չսխալվելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր հարց վերցնել բազմակողմանի, և վոչ թե միակողմանի, առանձին կտորներ չսլոկել ամբողջից: Վորքան պրոցեսի ավելի շատ կողմեր մենք վերցնենք ուսումնասիրելիս, այնքան քիչ վտանդ կլինի սխալվելու:

Յեթե մարդը՝ վոչ թե ուղիղ, այլ կոր դժով ընթացող իմացութեան բարդ պրոցեսից պոկի առանձին մի կտոր, դարձնի այն ինքնուրույն ուղիղ, ապա արդեն այստեղ վտանդ կա սխալվելու, հասնելու տերտերականութեան ճահիճը: Լենինը ցույց տվեց, վոր փիլիսոփայական իդեալիզմը միակողմանիորեն չափազանցում է իմացութեան (զգայութեան, հասկացողութեան և այլն) կողմի-

րից մեկը և այս դարձնում է «...աբստրուտ, վորը կարված է մտերիայից, բնութիւնից, վորն աստվածացված է»<sup>1</sup>:

Յերբ Հեյդը մարդկային մտածութիւնը վերածեց մարդուց և մարդկային ուղեղից անջատված իդեայի, Հեյդի մոտ այս իդեան զարձակ աստված: Բննադատելով իդեալիզմը, Լենինը մատնանշում էր, վոր իդեալիստի տեսակետով «վոչ թե բանականութեանն է բնութեան մասնիկը, նրա բարձրագույն պրոգնոզիկներէց մեկը, նրա պրոցեսների արտացոլումը, այլ բնութիւնն է բանականութեան մասնիկը և բանականութեանն ըստինքյան այսպիսով առաձգվում է՝ մարդկային ստիորական, հասարակ, բոլորին ծանոթ բանականութեանից դառնալով, — ինչպես Յո. Դիցդենն էր ասում, — «չափազանց», խորհրդավոր, աստվածային բանականութիւն»<sup>2</sup>:

Այս խոսքերով Լենինը բացահայտում է իդեալիզմի ու կրօնի իմացաբանական արմատները: Իդեալիստները միակողմանիորեն չափազանցում են զգայութիւնների և դիալեկտիկայի դերը, միանգամայն անտեսելով նրանց կախումը մտերիայից, իսկ սա չի կարող չհասցնել տերտերականութեան:

Կրօնի մեջ մարդկային ուղեղի պրոգնոզիկները դերբնական ուժերի ձև են ընդունում, վորովհետև կրօնը հանդիսանում է ուսուցիչական, բնութեան ու շահագործողական հասարակարգի ճնշման խեղաթյուրված ֆանտաստիկ արտացոլումը:

Շահագործող դասակարգերը մասսաներին ներշնչում են իրականութեան խեղաթյուրված ըմբռնում: Նրանք ել հենց ամբողջում են ամեն տեսակ կրօնական մտապատկերները: Շահագործող դասակարգերը շահագրգռված են վոչ միայն կրօնի, այլև իդեալիզմի տարածմամբ, վորովհետև իդեալիզմը ճանապարհ է դեպի տերտերականութիւն: «Իսկ տերտերականութիւնը (==փիլիսոփայական իդեալիզմը), իհարկէ, ունի իմացաբանական արմատներ, նա անհող չէ, նա անպատու ծաղիկ է, անտարակույս, բայց մի անպատու ծաղիկ, վորը բուսնում է մարդկային կենդանի, արգասավոր, ճշմարիտ, հզոր, ամենազոր, որչեւտիվ, բացարձակ իմացութեան կենդանի ծառի վրա»<sup>3</sup>, — գրում է Լենինը:

Լենինը չափազանց համոզիչ կերպով ցույց է տալիս, որի-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XIII, հայ., էջ 423:  
<sup>2</sup> Լենին, «Մտերիայիզմ և եմպիրիոկրիտիկիզմ», էջ 172. Հայ. Քաղ-հրատ, 1939 թ.:  
<sup>3</sup> Լենին, Յերկեր, 4. XIII, հայ., էջ 424:

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XII, էջ 337—339:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 339:

նակ, վոր բողոքանովյան իղեալիզմը (եմպիրիոմոնիզմը) ճանապարհ ե հանդիսանում զեպի տերտերականութեան:

Բողոքանովի մոտ յերկեա ե հանդիսանում «տարբերի քառար»: Տարբեր ասելով, նա հասկանում ե մարդուց ու մարդկութեանից կտրված զգայութեաններ: Զգայութեանները Բողոքանովի մոտ մեռած իղեալիստական արտորակցիա յեն, վորովհետև նա վերցնում ե զգայութեանները վոչ թե իբրև արտաքին աշխարհի պատկեր, այլ իբրև հատուկ, որչեկտիվ իրականութեանից անկախ տարր: Բողոքանովը չի ընդունում գոյութեան ունեցող արտաքին աշխարհը զգայութեաններից ու զիրտակցութեանից անկախ մարդու զիրտակցութեան մեջ արտացոլելու մատերիալիստական թեորիան: Իսկ այստեղից ուղղակի ճանապարհ ե զեպի տերտերականութեան: Լենինը ցույց ե տալիս, վոր Բողոքանովի մոտ ըստ եյութեան կան «վոչ վոքի զգայութեաններ, զգայութեաններ առհասարակ, աստվածային զգայութեաններ...»<sup>1</sup>:

Այս խոսքերով Լենինը բացահայտում ե կրոնի իմացաբանական արմատները: Նա ցույց ե տալիս, վոր յեթե զգայութեանները միակողմանիորեն չափազանցենք, կորենք մատերիալից, մարդուց, ապա անխուսափելի յե դլորումը զեպի տերտերականութեան: Իբրև որինակ մեջ բերելով Հեգելին, Լենինը գրում ե: «... Հեգելի մոտ աստվածային դարձավ սոսորական մարդկային հղեան, քանի վոր նրան պոկեցին մարդուց ե մարդկային ուղեղից»<sup>2</sup>:

Յերբ Բողոքանովն ու բոլոր ուսուսական մաթիստները զգայութեաններն անջատում են որչեկտիվ սեալականութեանից, յերբ Բողոքանովը Ֆիզիկական բնութեանը համարում ե հոգեկանի ամանցյալը, յերբ նա գտնում ե, վոր «մարդն սմենից սուաջ անմիջական ապրումների կոմպլեքս ե», սուա այստեղի փիլիսոփայութեանն անմիջականորեն հանդում ե կրոնի: Յիզիկական բնութեանն ամանցյալ համարել նշանակում ե ասածուն ընդունել բնութեան «ամանցող»: Խոսելով այն մասին, վոր Ֆիզիկական բնութեանն ամանցյալ ե հանդիսանում կենդանի եյակների փորձից, Բողոքանովը գլորվում ե զեպի՝ աստծուն իբրև բնութեան արարիչ ընդունելը:

Իրալեկտիկական մատերիալիզմն զգայութեանները, մտա-

պատկերները, հասկացողութեաններն ընդունելով իբրև կերպարներ, որչեկտիվ սեալականութեան արտացոլում, փակում ե սուսը ամեն տեսակ տերտերականութեան համար:

Լենինը ցույց ե տալիս, վոր Բողոքանովի մոտ զգայութեանները՝ իբրև որչեկտիվ աշխարհի արտացոլում՝ բացասումից բղխում ե որչեկտիվ ճշմարտութեան բացասում: Բողոքանովի կողմից որչեկտիվ ճշմարտութեան բացասման որինակով Լենինը փայլուն կերպով բացահայտում ե այն, վոր Բողոքանովն իր փիլիսոփայութեան մեջ սուանց կրոնի ծայրը ծայրին հասցնել չի կարողանում: Բողոքանովը վիճարկում եր աշխարհի ճանաչման հնարավորութեանը, չեր հալատում մեր գիտելիքների արժանահալատութեանը, բացասում եր սուորչեկտից կախում չունեցող որչեկտիվ ճշմարտութեանը: Ըճմարտութեան ասելով նա հասկանում եր «մարդկային փորձի կազմակերպող ձևը»: Որչեկտիվ ճշմարտութեան բացասումով Բողոքանովը բոլորովին ջնջում ե հալատել ու գիտութեան տարբերութեանը, փիլիսոփայորեն հիմնավորում ե աստվածաշինարարութեանը:

Բացասելով որչեկտիվ ճշմարտութեանը, Բողոքանովը զբանով արտաքսում եր բնութեանից ու պատմութեանից ամեն մի որչեկտիվ որենք, այսինքն՝ արտաքսում եր գիտութեանից ամեն մի որենք, այս տեսակետից վոչնչով չեր տարբերվում Ստրուվեյից, վորը նույնպես որենքները վտարում եր գիտութեանից:

Լենինը մերկացնում եր գիտութեանից որենքներն արտաքսելու դասակարգային իմաստը հետևյալ խոսքերով. «որենքների վտարումը գիտութեանից իրականում հանդիսանում ե կրոնի որենքների ներքաշում միայն»<sup>1</sup>:

Որչեկտիվ ճշմարտութեան վերաբերյալ Բողոքանովի հայացքները հիմնալի կերպով հաստատում են Լենինի այն դրույթը, թե աստվածաշինարարութեան թեորիական արմատները պարունակվում են մաթիզմի մեջ: Թուսական մաթիստներին մեղադրելով տերտերականութեան մեջ, Լենինը պաշտպանում եր «մատերիալիզմի հայտնի դրույթն այն մասին, վոր բնութեան մեջ գոյութեան ունեցող որինաշափութեանների վերաբերյալ մեր գիտական գիտելիքներն ստույգ են, վոր գիտութեան որենքներն որչեկտիվ ճշմարտութեան են հանդիսանում...»<sup>2</sup>, — ասված ե «Համկ(բ)ի պատմութեան համառոտ դասընթացի» մեջ:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XVII, էջ 274:

<sup>2</sup> «Համկ(բ)ի պատմութեան համառոտ դասընթաց», էջ 152, Հայ. Բողոքան, 1933 թ.:

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ ե եմպիրիոկրիտիցիզմ», էջ 240, Հայ. Բողոքան, 1930 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում:

Գիտութեան ուսմունքին համապատասխանում է որչեպիտիվ  
ուսանողները, որչեպիտիվ ճշմարտութուն: Կրոնական խեղ-  
ճողիցի չի համապատասխանում վորեւ որչեպիտիվ ճշմարտու-  
թուն: Արդի տերտերականութունը սրատրաստ է ընդունելու  
նույնիսկ գիտութունը, բայց իբր թե միայն մերժում է գիտու-  
թեան «չափազանց» հավակնութուններն որչեպիտիվ ճշմարտու-  
թեան վերաբերմամբ, վորովհետեւ որչեպիտիվ ճշմարտութեան ըն-  
դունումն անհամատեղելի չէ վորեւ կրոնի, վորեւ սնտոխապաշ-  
տութեան հետ:

Մերկայցնելով Բողոքանովի փիլիսոփայական հայացքներում  
յեղած տերտերականութունը, ցույց տալով, վոր որչեպիտիվ ճշ-  
մարտութեան բացասումը տանում է դեպի կրոն, Լենինը գրում  
էր, վոր ժամանակակից Ֆիդելիստները (վորոնց թվին էր սրատ-  
կանում նաև Բողոքանովը) որչեպիտիվ ճշմարտութեան իրենց բա-  
ցասման մեջ պատրաստ են ոչտաղտոճելու նաև գիտութունը:  
Լենինը գրում էր. «Արդի Ֆիդելիզմն ամենևին չի մերժում գի-  
տութունը. նա միայն մերժում է գիտութեան «չափազանց հա-  
վակնութունները», այն է՝ որչեպիտիվ ճշմարտութեան հավակ-  
նութունը: Յեթե որչեպիտիվ ճշմարտութուն դոյութուն ունի  
(ինչպես մատերիալիստներն են կարծում), յեթե մարդու «փոր-  
ձի» մեջ արտացոլելով արտաքին աշխարհը՝ բնագիտութունն է  
միայն ընդունակ մեզ տալու որչեպիտիվ ճշմարտութուն, ապա  
անպայման մերժվում է ամեն մի Ֆիդելիզմ»<sup>1</sup>:

Բողոքանովը մերժում է պրակտիկան իբրև ճշմարտութեան  
հիմնական կրիտերիում, և այդ անխուսափելիորեն նրան հասց-  
նում է տերտերականութեան, որչեպիտիվ ճշմարտութեան բացաս-  
ման:

Մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը, ընդու-  
նելով որչեպիտիվ ճշմարտութունը, դանդաղ է, վոր նրա որչեպ-  
իտիվ կրիտերիումը հեղափոխական պրակտիկան է հանդիսանում:  
Մենք յեղնում ենք այն բանից, «վոր աշխարհը և նրա որինաչա-  
փութունները միանգամայն ճանաչելի չեն, վոր բնութեան  
որենքների վերաբերյալ մեր գիտելիքները, վորոնք ստուգված են  
փորձով, պրակտիկայով, ստույգ գիտելիքներ են, վորոնք որչեպ-  
իտիվ ճշմարտութունների նշանակութուն ունեն, վոր աշխար-  
հում չկան անճանաչելի իրեր, այլ կան միայն իրեր, վորոնք գեռ

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 120, Հայ. Քաղ-  
հրատ, 1980 թ.:

ըմբռնված չեն, վորոնք գիտութեան և պրակտիկայի ուժերով  
կրացահայտվեն ու կճանաչվեն»<sup>2</sup>:

Պրակտիկան ընդունելով իբրև ճշմարտութեան հիմնական  
կրիտերիում, մարքսիզմը սրանով մերժում է ամեն մի տերտե-  
րականութուն: Բողոքանովը լայն կերպով դանդաղ է անում  
կրոնական խաղաղամտութեան համար, հեղափոխական պրակ-  
տիկայի փոխարեն առաջ մղելով ճշմարտութեան սուբյեկտիվ կրի-  
տերիումը—«հանրանշանակութունը»: Ըստ Բողոքանովի դուրս է  
գալիս, վոր յեթե շատ մարդիկ հաստատում են այս կամ այն  
հայացքներ, թեկուզ և կրոնական հայացքների, ճշտութու-  
նը, սպա, հետևաբար, մենք գործ ունենք ուսել իրերի, ուսել  
իրականութեան հետ, և այդպիսի հայացքներն իբր թե ճիշտ են,  
«հանրանշանակ են»:

Ըստ Բողոքանովի—ճշմարտութեան վոչ մի որչեպիտիվ կրիտե-  
րիում չկա: Յեթե այս կամ այն տեսակետը համաձայնեցված է  
մարդկութեան մեծ մասի փորձի հետ, նա, ըստ Բողոքանովի,  
հենց հանդիսանում է «հանրանշանակ ճշմարտութուն»:

Լենինը բացահայտեց «հանրանշանակութեան» այս թեորիա-  
յի ամբողջ կեղծութունը և ցույց տվեց, վոր այս թեորիան  
նուրբ, քողարկված կերպով ներս է խցկում կրոնը: Լենինը  
գրում է. «Հանրանշանակ է նաև կրոնը, վոր արտահայտում է  
մարդկութեան մեծ մասի փորձի սոցիալական համաձայնեցումը:  
Բայց կրոնի ուսմունքին, որինակ, յերկրադնդի սոցյալի մասին  
և աշխարհի սոցիալադոմութեան մասին վոչ մի որչեպիտիվ ուս-  
լականութուն չի համապատասխանում»<sup>2</sup>:

Ըստ Բողոքանովի դուրս է գալիս, վոր կրոնը նույնպես ճշ-  
մարիտ է, քանի վոր «հանրանշանակ է», վորովհետև մարդկու-  
թեան մեծ մասը կրոնական է: Բողոքանովը, ինչպես և բոլոր  
աստվածաշինարարները, դեղազարդում է կրոնը, նրան վերադրե-  
լով կազմակերպող սկզբունք: Կաթոլիկականութունն, որինակ,  
ըստ Բողոքանովի, նույնպես «սոցիալապես-կազմակերպված փորձ  
է», վորովհետև նա իբր թե հաջող ու լրիվ կերպով կազմակեր-  
պել է իր ժամանակի փորձը:

Լենինը, մերկայցնելով կաթոլիկականութեան դեղազարդումը  
Բողոքանովի կողմից, գրում էր. «...անտարակուսելի չէ, վոր

<sup>1</sup> «ՀամԿ(ր)ի դատմութեան համառոտ դասընթաց», էջ 151, Հայ. Քաղ-  
հրատ, 1938 թ.:

<sup>2</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 202, Հայ. Քաղ-  
հրատ, 1980 թ.:

կաթոլիկականութիւնը սոցիալապէս կազմակերպված փորձ է, —միայն թէ նա արասցուլում է վո՛չ թէ որչեփով ճշմարտութիւնը (վորը բացասում է Բողոքանովը և վորն արտացոլում է զիտութիւնը), այլ ժողովրդական տգիտութեան շահագործումը հասարակական վորսը դասակարգերի կողմից»<sup>1</sup>:

Այլեւի ուշ «Հաւատ և զիտութիւն» հոդվածում Բողոքանովը դժգոհութիւն էր արտահայտում այն բանից, վոր Լենինը հաճախ է դործածում «տերտերականութիւն» բառը մախիստների իր քննադատութեան մեջ: Բայց իր դատողութիւններով Բողոքանովը հաստատում է Լենինի հայտարարութեան ճշտութիւնը մախիստական փիլիսոփայութեան տերտերական բնույթի մասին:

«Գիտութիւնը հասարակական գիտակցութեան մասին» հոդվածում Բողոքանովը հասալ մինչև այն բանի խոստովանութեանը, վոր համարը դեպի անտառային վոզինները, տնային վոզինները և այլ սատանայութիւններ՝ հանդիսանում է «սոցիալապէս կազմակերպված փորձ»:

Իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատութեան մեջ Լենինը, մերկացնելով Բողոքանովին, ցույց է տալիս, վոր Բողոքանովի կողմից որչեփով ճշմարտութեան բացասումը նրան հասցնում է անտառային և տնային վոզինների ճանաչման, վորովհետև շատ շատերի համար թե՛ անտառային, թե՛ տնային վոզինները հանդիսանում են հանրանշանակներ:

Հաւատը դեպի անտառային, տնային վոզինները և այլ սատանայութիւններ՝ մշտապէս արգելակել և հաստրակական դարդացումը, խանգարել և աշխատավորների համախմբմանը՝ պայքարելու համար շահագործողների դեմ, ողնել և կեղեքիչներին՝ ստրկութեան մեջ պահելու ժողովուրդը: Ամեն մի կրոն խոչընդոտ է հանդիսանում մարդու պայքարին ինչպէս բնութեան տարերեքային ուժերի, այնպէս էլ շահագործողների դեմ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր Լենինը, մերկացնելով Բողոքանովի տերտերականութիւնը, ցույց է տալիս, թէ ինչպէս խնայարանութեան մեջ պրակտիկայի դերի բացասումը հասցնում է որչեփով ճշմարտութեան բացասման, տերտերականութեան: Մասնացույց անելով Մարքսի 2-րդ թեղիսը Յոյերբախի մասին, Լենինն ընդգծում է, վոր պրակտիկայից դուրս այն հարցադրումը, թէ որչեփով ճշմարտութիւնը համապատասխանում է

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 252, Հայ. Բաղ-հրատ, 1939 թ.:

արդյոք մարդկային մտածութեան, հանդիսանում է սխալատիկա:

Լենինը ցույց է տալիս, վոր միայն պրակտիկայի կրիտիկութեան և հնարավորութեան տալիս անխնայ պայքար մղելու իրեակիցմի բոլոր տարատեսակութիւնների դեմ, հնարավորութիւն տալիս ճշմարտութիւնը տարբերելու ստից, սահմանելու որչեփով ճշմարտութիւնը:

«Բնութեան նկատմամբ տիրապետութիւնը, վոր իրեն բացահայտում է մարդկութեան պրակտիկայում, արդյունք է մարդու դիւի մեջ բնութեան յերևույթների և պրոցեսների որչեփով վորեն հարազատ արտացոլման, սպացույց է այն իրողութեան, վոր այդ արտացոլումը (այն բանի սահմաններում, ինչ վոր մեղցույց է տալիս պրակտիկան) որչեփով, բացարձակ, հալիտեանական ճշմարտութիւն է»<sup>2</sup>:

Բողոքանովը, ինչպէս և բոլոր մախիստները, բացասում է հեղափոխական պրակտիկայի դերն իբրև ճշմարտութեան որչեփով կրիտիկութեան, և այստեղից էլ՝ նրա անճարակութիւնը Ֆիգելիզմի հանդեպ:

Պրակտիկան ցույց տվեց Մարքսի—Ենգելսի—Լենինի—Մտալինի թեորիայի որչեփով ճշմարտութիւնը: Մարքսիզմ—լենինիզմը որչեփով ճշմարտութիւն է, և Բողոքանովը, խզելով իր կայերը մարքսիզմի հետ, չէր կարող այլ կերպ ընթանալ, քան իրեակիցմի ու կրոնի ուղիով:

Լենինը, քննադատելով Բողոքանովի փիլիսոփայութիւնը, հեղնում է. «Վորքան ցափայի յե, վոր այս յերևելի փիլիսոփայութիւնը դեռևս չի ընկել մեր հոգևոր սեմինարիաները, —այնտեղ կկարողանային դնահատել նրա բոլոր արժանիքները»<sup>2</sup>:

Լենինի այս խոսքերը նմանապէս կարող են վերազդել բոլոր ստովածաշինարարներին (Յուչկեվիչին, Լուսնաքրսկուն և մյուսներին):

Իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատութեան մեջ Լենինն ընդգծում է Բողոքանովի, Յուչկեվիչի և Լուսնաքրսկու միջև յեղած դադարակարական ցեղակցութիւնը:

Յուչկեվիչը մարդկային բանականութեան կողքին իբրև դո-

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 206, Հայ. Բաղ-հրատ, 1939 թ.:

<sup>2</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 251, Հայ. Բաղ-հրատ, 1939 թ.:

յուժյուն ունեցող ամեն ինչի հիմք ընդունում եր «Լուգոսը»: Այդ ուղղակի տերտերականութիւնն եր:

Յուշկեվիչը գտնում եր, վոր «Լուգոսը» մտցվում է «տվյալի իրացիոնալ հոսանքի» մեջ: Սրանով Յուշկեվիչն աստվածացնում եր մարդկային բանականութիւնը, վեր եր անում այն արարակաւ, աստվածային «Լուգոսի»: Այնպես, ինչպես և Բողաւնովը, բնութիւնը համարելով հոգեկանի անանցյալը, Յուշկեվիչը զրտվում եր դեպի աստծու ճանաչումն իրրև բնութեան ստեղծողի:

Յուշկեվիչի ու Բողաւնովի թեորիաների և Լունաչարսկու «մարդկութեան բարձրագույն պոսենցիաների» աստվածացման միջև ամենատերտ կապ գոյուժյուն ուներ: Լունաչարսկին «մարդկային բարձրագույն պոսենցիաներն» աստվածացնում եր զլիսավորապես եսթետիկական տեսակետից, «Տալիտենապես զեղեցիկ» համարելով աստծու դաղափարը: Հիւրավի՛ աստծու դաղափարը ծնունդ է առել այն մարդկանց ծեծկվածութեան, յերկյուղի, հուսահատութեան, սարսափի շնորհիւ, վորոնք ճգնված են հալիտենական կարիքից ու մենակութեանից, ճնշված են բնութեան ու շահագործող դասակարգերի կեղեքումից:

Յուշկեվիչն ու Բողաւնովն ըստ եյուժյան նույնպես աստվածացնում եյին մարդու զգացմունքները, միայն առաւելյապես զնոսեոլոգիական (թեորիական-իմացաբանական) տեսակետից: Որինակ, Բողաւնովը «մարդկային բարձրագույն պոսենցիաները» աստվածացնում եր «ընդարկման» իր թեորիայով: Բողաւնովը զրտնում եր, վոր ամբողջ Ֆիզիկական բնութեանը պետք է ընդարկել «հոգեկանը»: «Հոգեկանին» վոչինչ չպետք է ընդարկել, քանի վոր ըստ Բողաւնովի—Ֆիզիկական բնութեանը հոգեկանի անանցյալն է: Այսպիսով, Բողաւնովը հոգեկան յերեույթներն անջատում եր մարդուց, անընդգրկելիորեն ընդարձակողմ եր հոգեկան յերեույթները, զրանք զարձնելով աստվածային արտոլուտ:

Լենինը Բողաւնովի, Յուշկեվիչի ու Լունաչարսկու դաղափարային ցեղակցութեանն ընդգծում է հետեյալ խոսքերով.

«Կույր պետք է լինել՝ չտեսնելու համար այն դաղափարային ցեղակցութեանը, վոր կա Լունաչարսկու «մարդկային բարձրագույն պոսենցիաների աստվածացման» ու Բողաւնովի «ընդհանուր ընդարկման» միջև, ըստ վորի հոգեկանին է յենթարկվում ամբողջ Ֆիզիկական բնութեանը: Սա միեւնույն միտքն է՝ մի դեպքում առավելապես եսթետիկական տեսակետից արտահայտված, մյուս դեպքում՝ զնոսեոլոգիական: «Ընդարկումը», լոելյայն և

այլ կողմից մոտենանով հարցին, արդեն աստվածացնում է «մարդկային բարձրագույն պոսենցիաները», «հոգեկանը» կըտրելով մարդուց, Ֆիզիկական ամբողջ բնութեանն ընդարկելով անընդգրկելի-ընդլայնած, արտարակաւ, աստվածային-մեոյալ «առհասարակ հոգեկանին»: Հապա Յուշկեվիչի «Լուգոսը», վոր մտցվում է «տվյալի իրացիոնալ հոսանքի մեջ»<sup>1</sup>:

Այսպիսով, Լենինն իր «Մատերիալիզմ և Եմպիրիոկրիտիցիզմ» աշխատութեան մեջ, մերկացնելով յեմպրոպական և ուուսական մատիտաներին, ցույց է ապլիւս, վոր մատիտական փիլիսոփայութեանը շատ հարմար զործիք է տերտերականութեանը քոյարկված կերպով ներս խցկելու համար:

Լենինը գրում է. «... նրբին միջոցներով են փորձում կըրթալած բուրժուադիայի ներկայացուցիչներն արհեստականորեն փոքրիկ տեղ պահպանել կամ գտնել Ֆիզիկիզմի համար, վորը ժողովրդական մասսաների ստորին խավերում ծնունդ է առնում վերջականութեանից, կեղեքվածութեանից և կապիտալիստական հաստեութեանների անհեթեթ վայրենութեանից»<sup>2</sup>:

Լենինի պայքարը մատիլիզմի դեմ հսկայական նշանակութեան ուներ: Ռեակցիայի ժամանակաշրջանը հարուստ «հեղափոխութեան դասերը» մարսելու շրջանն եր: Փիլիսոփայական վերլուծումն անհրաժեշտ եր մասնավորապես նրա համար, վորպեսզի վերջնականապես մերկացվեն աստվածաշինարարութեանն ու մատիլիզմը:

Լենինը գրում է, վոր ռեակցիայի ժամանակաշրջանի որչեկտով պայմաններն իրրև հերթական խնդիրներ դրին «... դրակաւնութեան բնագալաոում—աստվածաշինարարութեանը և մարքնտիկական թեորիական հիմունքները, իսկ քաղաքական աշխատանքի բնագալաոում—III Դումայի ոգտագործումը...»<sup>3</sup>:

\* \* \*

Աստվածաշինարարներ Լունաչարսկին, Բաղարովը, Բողաւնովը 1909 թ. դարնանը կապրի կղզում կազմակերպեցին իրենց Ֆրակցիոն կենտրոնը, վորն անվանեցին «Վալերյոզ» խումբ:

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և Եմպիրիոկրիտիցիզմ», էջ 385—386, Հայ. Բաղարատ, 1939 թ.:

<sup>2</sup> Լենին, «Մատերիալիզմ և Եմպիրիոկրիտիցիզմ», էջ 342, Հայ. Բաղարատ, 1939 թ.:

<sup>3</sup> Լենին, Յերկեր, հ. XIV, էջ 158:

Կապրի կղզում նրանք կազմակերպեցին հատուկ դպրոց, վորի ունկնդիրները դաստիարակվում էին աստվածաշինարարական վոգով, բոլշեիկները հանգեց թշնամության վոգով: Բողոքանովը խարեյությամբ Կապրիի դպրոցը ներգրավեց վորոշ թիով բանվորներ: Յերբ բանվորները համոզվեցին, վոր այդ դպրոցում մարքսիզմի անվան տակ մախիզմ և աստվածաշինարարություն է հրամցվում, նրանց մի մասն անցավ Փարիզ, վորտեղ գտնվում էր բոլշեիկյան կենտրոնը և վորտեղ ապրում էր Լենինը: Փարիզի մոտերքում, Լոնժյումոյում, Լենինը կազմակերպեց կուսակցական դպրոց, վորտեղ դասախոսություններ էին կարգում Լենինը, Դուբրովնիսկին և այլ բոլշեիկներ: Այդ դպրոցում մատերիալիստական թեորիան սերտորեն կապված էր պրակտիկայի հետ: Ընկեր Կազանովիչը 1931 թվին Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի տասնամյակին նվիրված իր ճառում ընդգծում էր Լոնժյումոյի դպրոցի և Կապրի կղզու դպրոցի սկզբունքային սարքերությունը: Լոնժյումոյի դպրոցը «հագեցած էր քաղաքական ակտուալ բովանդակությամբ»:

Այդ դպրոցի ունկնդիրները հավաքագրված էին տեղական կուսակցական կազմակերպությունների կողմից: Նա շատ բան տվեց բոլշեիկյան կազմերի թեորիական պատրաստության համար: Մանավորապես, այդ դպրոցումն էր սովորել ընկ. Սերգո Որջոնիկիձեն:

1910 թ. Բոլոնիայում ստեղծելով նոր Ֆրակցիոն դպրոց, «Վալերյոզականները» Հուզա Տրոցկուն և նրա մի շարք լիկվիդատոր բարեկամներին հրավիրեցին դասախոսություններ կարգալու:

«Վալերյոզ» խմբին չհաջողվեց իրեն համար կողմնակիցներ հավաքալու բանվորներից: «Пролетарий» լրագրի 1909 թվի №47—48-ի հավելվածում րերվում են տեղական կուսակցական կազմակերպությունների թղթակցությունները Կապրի կղզու դպրոցի մասին:

Մոսկվայի մարզային կոմիտեյի վորոշման մեջ մասնանշվում էր, վոր Կապրի կղզում «փելիսոփայությունը ներկայացված է բացառապես սեփղիոնիստական հոսանքի կողմնակիցների կողմից»:

Ընկեր Ստալինի, Սերգո Որջոնիկիձեյի և այլ ընկնյանների կողմից դաստիարակված ու կոփված Բազլի կազմակերպությունը խիստ դասապարտեց ոտզովիզմը, ուլտիմատիզմը և աստվածաշինարարությունը: «Пролетарий» լրագրի 1909 թվականի

№ 49-ում բերվում է Բազլի բոլշեիկյան կոմիտեյի բանաձևը ոտզովիզմի, ուլտիմատիզմի և աստվածաշինարարության հարցի մասին: Այդ բանաձևի պարագրաֆները մեկն աստվածաշինարարությունը դատապարտում է հետևյալ տողերով:

«Այսպես կոչված «աստվածաշինարարությունը», իբրև դեպի հոսանք, և առհասարակ կրոնական տարրերի ներմուծումը սոցիալիզմի մեջ, — հանդիսանում է մարքսիզմի հիմունքների վոշ գլխական, այս պատճառով ել պրոլետարիատի համար վնասակար մեկնաբանության արդյունք: Բազլի կոմիտեն ընդգծում է, վոր մարքսիզմը կազմավորվել, մշակվել ու վորոշ աշխարհայացք է դարձել վոշ թե շնորհիվ կրոնական տարրերի հետ դաշինք կընքելու, այլ նրանց դեմ անողոք պայքար մղելու հետևանքով»:

Աստվածաշինարարները սեպտեմբրի 1-ի ժամանակաշրջանի հենց սկզբից մեկուսացած էին: Լենինը հեղնորեն նկատում է «Վալերյոզ» խմբի այն անհաջողությունների առթիվ, վոր նա ունեցել էր բոլշեիկները դեմ մղած պայքարում: — «Հաղորդում են, վոր «Վալերյոզ» խումբը մեղադրում է Լուենաչարսկու հորինած վաստաստուն՝ վերջինիս անհաջողության համար, և վոր նա միայն վորոշում է ընդունել այլիլ լավ աստված հնարելու»:

Վալերյոզականները Լենինին մեղադրում էին անհամբերողության մեջ և ասում, վոր բոլշեիկները պայքարում են իբր թե միայն ընդդեմ անհաջող տեորիանարանության: Բողոքանովը «Հալաստ և դեխոթյուն» հոդվածում կեղծավորաբար մերժելով իր կապը և Բազարովի կապը Լուենաչարսկու աստվածաշինարարության հետ, ասում է, թե իբր վերջինս ել աստվածաշինարարություն չունի, այլ միայն անհաջող տեորիանարանություն ունի: Բողոքանովն ուզում է աղացուցել, վոր Լենինն ու Պլեխանովն իբր թե ամեն կերպ ձգտում են կոծկել Լուենաչարսկու հայացքների էությունը, վոր Լուենաչարսկին, իբր թե, չի հասնում մինչև ուղղակի տեորաբանություն, վոր նա, իբր թե, պարզապես անհաջող է արտահայտել իր «եսթետիկական հայացքները», «հայացքները կուլտուրայի նկատմամբ»:

Լենինը մերկացնելով աստվածաշինարարների այդ մանյովրը, ընդգծում է, վոր «կուլտուրա» և «պրոլետարական փելիսոփայություն» բարձրագուրը անունների տակ՝ Բողոքանովն ու Ընկ. Վալտազովի ներս են քաշում աստվածաշինարարություն, կրոնի ու սոցիալիզմի «միավորում»:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XV, էջ 206:

«Пролетарий»-ի ընդլայնած խմբագրութեան 1909 թ. հունիսյան խորհրդակցութեանը Լենինի ձեռքով գրված՝ «Արտասահմանում № №-ում հիմնվող կուսակցական դպրոցի մասին» հատուկ բանաձևում նշում էր, Վոր «... բուլչեիկյան Փրակցիան այդ դպրոցի համար վոչ մի պատասխանատվութեան չի կարող կրել»<sup>1</sup>:

Բողոքանովը, Լուենաչարսկին և մյուսներն ստիպեցին իրենց դպրոցի աշակերտներին նամակ ուղարկելու Լենինին: Այդ նամակում բացատրում էր դպրոցի կապն աստվածաշինարարութեան և ուղղվածի հետ: Նամակում ասվում էր, Վոր դասընթացները ծրագրեր կրոնի սրբապահանդա չի սրբունակում, ուստի և նրա մեջ աստվածաշինարարութեան չկա:

Լենինը 1909 թ. սեպտեմբերի 30-ին «Կապրիի կուսակցական դպրոցի աշակերտներին» գրած «նամակում» պատասխանում էր, Վոր դպրոցի բնույթը վորոշվում է վոչ թե ծրագրով, այլ դասախոսների կազմով: Լենինը Բողոքանովի Կապրիում հիմնած դպրոցն անվանում էր աստվածաշինարարութեան կենտրոն: Նա նշում էր, Վոր դասախոսների մեջ բուլչեիկներ չկան. Կապրիի դպրոցի դասախոսները վպերյոզականներն էյին՝ Բողոքանովը, Լուենաչարսկին, Լյադովը, Ալեքսինսկին: Կապրի կղզում փիլիսոփայական մատերիալիզմի փոխարեն հրամցվում էր մատրիզմ և աստվածաշինարարութեան:

Լենինը նշում էր, Վոր «... Լուենաչարսկին Կապրի կղզուց աստվածաշինարարութեան քարոզ մղեց. Ռուսաստանում նրան ողնում էր Բաղարովը: Ռուսներն տասնյակ լեղալ դրժերում ու հողվածներում, արտասահմանյան տասնյակ ունիքերում Բողոքանովը պաշտպանում էր միտոնեակ փիլիսոփայական հայացքներ»<sup>2</sup>:

Հետագայում «աստվածային ուղղվածներն» ամբողջութեամբ ցույց տվին իրենց դպրոցի Փրակցիոն բնույթը, 1909 թ. նոյեմբերին դպրոցից հեռացնելով հինգ լենինյան-ունկնդիրներին՝ բանվոր Ն. Վիլոնովի գլխավորութեամբ:

Վպերյոզականներն իրենց հակակուսակցական դեմքը ցույց տվին նրանով, Վոր մաման Տրոցկու հակակուսակցական բլոկի մեջ, Վորը, ինչպես հայտնի յե, միավորում էր բացառապես

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XIV, էջ 102: (Նորը վերաբերում է այն դպրոցին, Վոր Կապրի կղզում 1909 թ. դարձան կազմակերպել էյին ուղղվածները, ուղիմաստիտներն ու աստվածաշինարարները: — Մամ. խմբ.):  
<sup>2</sup> Լենին, Յերկեր, հ. XIV, էջ 119:

հակակուսակցական տարրեր՝ սկսած փիլիսոփայություններից ու տրոցկիստներից մինչև ուղղվածներն ու աստվածաշինարարները: «Աստվածային ուղղվածները» պատահաբար չե, Վոր պաշտպանում էյին Տրոցկուն, Վորովհետև, Լենինի խոսքերով, վպերյոզականները շարքերում կային «... չճանաչված փիլիսոփաներ, նշանակված աստվածաշինարարներ, անարխիստական տհասութեան և հեղափոխական թեթևամիտ Փրակցի մեջ մերկացված ուղղվածներ, խոսնված-չիթված ուլտիմատիստներ...»<sup>1</sup>:

Վպերյոզականներն իրենց քայքայիչ աշխատանքը կատարում էյին փիլիսոփայական մտքի «ազատութեան» լողունով: Լենինը մերկացրեց այդ ամբողջապես սպորտունիստական լողունը: Նա մատնանչեց. «Իսկ սրբախոսարիտի կուսակցութեանն աղատ միութեան է, Վոր հիմնվում է բուրժուազիայի «մտքերի» (կարդա՛ իրեուղիայի) դեմ պայքարելու խառն, մի վորոշակի աշխարհայացք, այն է՝ մարքսիստական աշխարհայացքը պաշտպանելու և կենսագործելու համար: Սա այբուբենն է»<sup>2</sup>:

Բուլչեիկյան կուսակցութեանը մերկացրեց աստվածաշինարարութեան իրեն սրբախոսարիտի վրա բուրժուական աղբեցութեան ձեւերից մեկը: Լենինը դրում էր. «Պրոլետարիատը մեր բուրժուա-դեմոկրատական հեղափոխութեան առաջնորդն է: Նրա կուսակցութեանը պետք է լինի դադափարական առաջնորդ այն պայքարում Վոր մղվում է ամեն տեսակ միջնադարայնութեան, այս թվում նաև հին, կաղյոնի կրոնի և այն բոլոր փորձերի դեմ մղվող պայքարում, Վորոնց նպատակն է նորոգել այն, կամ նորից կամ այլ կերպ հիմնադրել և այլն»<sup>3</sup>:

Լենինը խայրաճակութեան էր անվանում աստվածաշինարարութեան քարոզը և ասում էր. «Վորպիսի բարեմիտ դիտարարութեան էլ ունենաք դուք, ընկե՛ր Լուենաչարսկի, ձեր սեթեթանքները կրոնի նկատմամբ՝ վոչ թե ժպիտ, այլ նողկանք են հարուցում»<sup>4</sup>:

Բողոքանովը, Բաղարովը, Լուենաչարսկին աստվածաշինարարութեան, նոր կրոնի իրենց քարոզով կատարում էյին հակահեղափոխական լիբերալ բուրժուազիայի պատվերը: «Пролетариат»-ի ընդլայնած խմբագրութեան խորհրդակցութեանը 1909 թ.

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XIV, էջ 158:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 347:  
<sup>3</sup> Նույն տեղում, էջ 75:  
<sup>4</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 203, Հայ. Բաղարատ, 1939 թ.:

Հունիսին իր «Աստվածաշինարարական տենդենցները սոցիալ-դեմոկրատական միջավայրում» բանաձևի մեջ աստվածաշինարարութեանը տվեց հետևյալ դնահատականը. «Նկատի ունենալով, վոր ներկայումս, յերբ—հասարակական շարժման անկման մըթնորոտում—հակահեղափոխական բուրժուական ինտելիգենցիայի մեջ կրոնական տրամադրութեաններն աճումը նման կարգի հարցերին հասարակական կարևոր նշանակութեան է տվել և վոր կրոնական տրամադրութեաններն այդ աճման կապակցութեամբ այժմ առանձին սոցիալ-դեմոկրատներն կողմից ել փորձեր են արվում սոցիալ-դեմոկրատիայի հետ կապելու հավատի ու աստվածաշինարարութեան քարոզը և նույնիսկ դիտական սոցիալիզմին կրոնական հավատալիքի բնույթ տալու,—«Пролетарий»-ի ընդլայնած խմբագրութեանը հայտարարում է, վոր նա համարում է այդ հոսանքը, վորն առանձնապես ցայտուն կերպով պրոպագանդա յե արվում ընկեր Լուսաչարսկու հողվածներում, մարքսիզմի հիմունքների հետ իր կապերը խզող մի հոսանք, վոր իր քարոզի բուն իսկ եյութեամբ, և բնավ վոչ միմիայն տերմինաբանութեամբ, վնաս է բերում, հեղափոխական սոցիալ-դեմոկրատական աշխատանքին բանվորական մասսաների լուսավորման ապարեղում, և վոր զիտական սոցիալիզմի այսպիսի ազավադման հետ վոչ մի ընդհանուր բան չունի բուլշևիկյան Փրակցիան»<sup>1</sup>: Այդ բանաձևում ցույց է տրված աստվածաշինարարութեան կապը հակահեղափոխական բուրժուական տրամադրութեաններն հետ, դեն է շարտվում Լուսաչարսկու, Բոդլանովի և մյուսների վորմն աստվածաշինարարութեանը ներկայացնելու իրեն «տերմինաբանական» վեճ, ընդգծվում է «պոպուլիստների» լիակատար խզումը մարքսիզմի հիմունքների հետ, բուլշևիզմի հետ:

\* \* \*

Սխտ քննադատելով Լուսաչարսկուն, Լենինը ջանում էր նրան դուրս կորզել Բոդլանովի ազդեցութեան տակից և Լուսաչարսկուն պահել կուսակցութեան համար: XXVI Լենինյան ժողովածվում հրապարակված են Լենինի 5 նամակները Լուսաչարսկուն, գրված 1908 թ., վորոնք ցույց են տալիս, վոր Լենինը ձգտում է Լուսաչարսկուն գրավել բուլշևիկյան մամուլին սերտորեն համադրծակցելու մեջ: Շատ հետաքրքրական է Լենինի

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XIV, էջ 451—452:

նամակը Լուսաչարսկուն, գրված 1908 թ. 16/IV: Այս նամակը ցայտուն կերպով վկայում է Լենինի խիստ բացատական վերաբերմունքի մասին զեպի մասիկումն ու աստվածաշինարարութեանը: Լենինը գրում էր. «Փ[իլիսոփայու]թյան վերաբերմամբ մասնավոր կերպով չեմ կարող կոմպլիմենտներ վերադարձնել Ձեզ և կարծում եմ, վոր Գուք դրանք չուտով հետ կվերցնեք: Իսկ իմ ճանապարհները բաժանվել են (ու, թերևս, յերկար ժամանակով) «գիտ[ական] սոց[իալիզմ]» և կրոնը միա[ցնել] «քարոզողների և առհասարակ բոլոր մախիստների հետ»<sup>1</sup>: Իր «Մատերիալիզմ և եմպիրիոլոգիաիզմ» աշխատութեան մեջ Լենինը գրում էր, վոր մե՛ք «պատերազմում ենք, քանի դեռ հող կա ընկերական պատերազմի համար»:

Լուսաչարսկին չմնաց բուլշևիկյան դիրքերում և շրջվեց դեպի ոտզովիզմ և աստվածաշինարարութեան: 1913 թ. փետրվարին Ա. Մ. Գորկուն ուղղած նամակում Լենինը գրում է, վոր լավ կլիներ Լուսաչարսկուն տարբերել Բոդլանովից եսթետիկայի հարցերում:

Լուսաչարսկին 1917 թվի նախահոկտեմբերյան ժամանակաշրջանում վերադարձավ բուլշևիկյան կուսակցութեան մեջ: Լուսաչարսկին մեռավ իրեն բուլշևիկ: Նա քիչ ողուտ չտվեց կուսակցութեանը, բայց փիլիսոփայութեան բնագաղափարում 1917 թ. Հոկտեմբերից հետո ել Լուսաչարսկին լիովին չազատվեց հին մասխտական բեռից:

Անխնայորեն մերկացնելով Բոդլանովին, Բադարովին և մյուսներին, Լենինը ձգտում էր աստվածաշինարարների ազդեցութեան տակից դուրս կորզել Ա. Մ. Գորկուն: Լենինի ընկերական քննադատութեանը հսկայական նշանակութեան ունեցավ Գորկու համար:

Աստվածաշինարարութեան դեմ Լենինի մղած պայքարի կարևորագույն փաստաթղթերից մեկն են հանդիսանում Լենինի նամակները Ա. Մ. Գորկուն: Գորկին—բանվոր դատակարգի յերեւելի, մեծագույն գրողը, լիբերալիզմի, մեչչանութեան, միտտիկայի կատաղի թշնամին—1908—1910 թ. թ. ժամանակաշրջանում կրում էր Բոդլանովին ու Լուսաչարսկու վորոշ ազդեցութեանը:

Լենինը 1908 թվից մինչև 1913 թ. աշխուժ գրադրութեան էր ունենում Ա. Մ. Գորկու հետ: Լենինը հսկայական ջանքեր գործադրեց, վորտեսպի ուղղի Ա. Մ. Գորկու դիժը: Լենինը

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XXVI, էջ 39:

պարզաբանեց Ա. Մ. Գորկուն, վոր Բողղանովի փիլիսոփայությունը ղեկավարեց փիլիսոփայությունն և, թշնամի յե բանավոր դասակարգին, վոր աստվածաշինարարության քարոզը թշնամի յե հեղափոխությանը և նմանապես ղեկավարեց ղեզը և հանդիսանում: Լենինը Ա. Մ. Գորկունը դրած նամակներում մերկացնում էր աստվածաշինարարությունը, մախիստական փիլիսոփայությունը, ուղղովիղը:

«Հրապարակախոսի նոթերում» Լենինը քննադատում է «աստվածային ուղղովիստներին» Ա. Մ. Գորկու հեղինակությունը դադարաբային իմաստով ողտաղործելու փորձերի համար՝ «վորպեսզի ամբաստնեմ մախիղմն ու ուղղովիղը»: Միևնույն ժամանակ Լենինը բազմիցս ընդգծում էր Ա. Մ. Գորկու հակայական նշանակությունը պրոլետարական արվեստի դործում:

Յերբ Կապրեի դպրոցից բուլղեղի համար վտարված Վլոնովից Լենինն խմայալ, վոր Ա. Մ. Գորկին սուր ապրումներ ունի տարածաշուքյունների պատճառով, Լենինը Գորկուն իրախոսիչ նամակ գրեց, վորի մեջ ասում էր Գորկուն. «Արվեստագետի Ձեր տաղանդով Դուք այնքան հակայական ոգուտ եք բերել Ռուսաստանի—և վոչ միմիայն Ռուսաստանի—բանավորական շարժմանը...»: Լենինը խորհուրդ էր տալիս անձնատուր չլինել ծանր տրամադրություններին, վորոնք հետևանք են արտասահմանյան պայքարի եպիլոգներին: Յերբ բուրժուական մամուլն սկսեց բամբասանք տարածել, իբր թե Գորկին վտարված է կուսակցությունից, Լենինը հատուկ հոգված գրեց՝ «Բուրժուական մամուլի հեքիսթը Գորկուն վտարելու մասին»: Այդ հոգվածում նա ասում էր, վոր բուրժուական գրպարտիչներին արհամարհանքով պետք է պատասխանել. «Ընկեր Գորկին իբեն չափազանց ամուր է կապել Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանավոր դասակարգի հետ իր մեծ դեղարվեստական յերկերով, վորպեսզի այլ կերպ պատասխանի նրանց, քան արհամարհանքով»<sup>2</sup>:

Լենինն ամեն կերպ պաշտպանում էր Ա. Մ. Գորկու պայքարն այն յերեսպաշտների ու ժուլիկների դեմ, վորոնք ստորաքարչություն էլին անում Տոլստոյի հանդեպ, աստվածացնում էլին նրան:

1911 թ. Լենինը գրում էր Ա. Մ. Գորկուն. «Տոլստոյի վերաբերմամբ լիովին համաձայն եմ Ձեր կարծիքին, վոր յերեսպաշտ-

ներն ու ժուլիկները նրան պիտի սրբացնեն: Պլեխանովը նույնպես կատաղել է հանդեպ Տոլստոյի կատարվող ստախոսությամբ ու ստորաքարչությամբ, և մենք այստեղ համամիտ ենք»<sup>1</sup>:

Լենինն ամեն միջոց ձեռք էր առնում, վորպեսզի Գորկուն դուրս կորզի աստվածաշինարարների ազդեցության տակից, և այս նրան հաջողվեց անել: Ինչպես մատնանշում է Լենինը, Ա. Մ. Գորկին «հիասթափվեց Բողղանովից ու հասկացավ նրա վարքագծի կեղծությունը»<sup>2</sup>:

Ա. Մ. Գորկին Լենինի վերաբերյալ իր հիշողություններում գրում է. «Նրա վերաբերմունքն իմ հանդեպ խիստ ուսուցչի և բարի հոգատար բարեկամի վերաբերմունք էր»<sup>3</sup>:

Իր ամբողջ պայծառ կյանքը Ա. Մ. Գորկին կապեց մեծ Լենինի և մեծ Ստալինի հետ, լինելով նրանց լավագույն ու ամենամերձավոր բարեկամը:

Ա. Մ. Գորկին ընկալ մարտական պոստում արոցկիստական-բուխարինյան Փաշխտական բանդիտների ձեռքից՝ իբրև կուսակցության լենինյան-ստալինյան գծի մարտիկ:

### III.

ՄԱՆԻՉՄԻ ՅԵՎ ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՈՒ ԱԶԱԿԻՑՆԵՐԻ ՄԵՐԿԱՑՈՒՄԸ ԼԵՆԻՆԻ ԿՈՂՄԻՑ: ՊԼԵՆԱՆՈՎԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԳԵՊԻ ՄԱՆԻՉՄՆ ՈՒ ԱՍՏՎԱԾԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

II Ինտերնացիոնալի ուղորտունիստները պաշտպանում էլին Բողղանովին, Լոնոնաչարսկուն և մյուսներին մախիղմի ու աստվածաշինարարության նրանց քարոզի ասպարիղում: Այն ժամանակ լինելով ուղորտունիղմի ամենանողկալի տեսակի—ցենսորիղմի ներկայացուցիչը, Կաուցկին հանդես էր գալիս այն վճռական պայքարի դեմ, վոր մղում էր Լենինը մախիղմի ու աստվածաշինարարության դեմ:

1909 թ. մարտի 26-ին ընկ. Բենդիանիձեյին ուղղած նամակում Կաուցկին գրում էր այն մասին, թե մախիղմն ու մարքսիղկում միացնելի յեն, բացասելով մախիստական փիլիսոփայության մը:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XV, էջ 57:

<sup>2</sup> Լենին, Յերկեր, 4. XXVIII, էջ 554:

<sup>3</sup> Մ. Գորկի, Ընտիր յերկեր 2 հատորով, 4. II, էջ 602, Гослитиздат,

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XIV, էջ 189:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 211:

իզեալիստական բնույթը: Կառուցիկն հանդես եր դալիս մախիզմի դեմ մղվող պայքարին կուսակցական նշանակութուն տալու դեմ:

Կառուցիկն դարձացնում եր այն թեորիան, թե մախիզմը պիտի լինի մասնավոր գործ կուսակցութեան համար: Այս նամակն ողբազործում եր հակակուսակցական «Վպերյոզ» խումբը Լենինի և բուլշևիկների կուսակցութեան դեմ մղած իր պայքարում:

Լենինը 1908 թ. փետրվարի 13-ին Ա. Մ. Գորկուն զրաժ նամակում նշում եր ի Ինտերնացիոնալի բոլոր ուղորտունիստների կողմնակցութունը մախիզմին: Լենինը գրում եր.

«Մատերիալիզմն իբրև փիլիսոփայութուն, նրանց մտտաբեկումներն հալածված ե: «Neue Zeit»-ը, ամենակայուն և գիտակորզանը, անտարբեր ե դեպի փիլիսոփայութունը, յերբեք փիլիսոփայական մատերիալիզմի թունդ կողմնակից չի յեղել, իսկ վերջին ժամանակներս, առանց մի հատիկ վերապահութեան, ապազրում եր եմպիրիոկրիտիկներին: Վորպեսդի այն մատերիալիզմից, վորը սովորեցնում եյին Մարքսն ու Ենգելսը, կարելի լինի մեռած մեջջանութունը դուրս բերել, այդ սխալ ե, սխալ ե: Սոցիալ-դեմոկրատիայի բոլոր մեջջանական հոսանքներն ամենից ավելի կոչում են փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, քաջում են դեպի Կանտը, նեոկանտականութունը, կրիտիկական փիլիսոփայութունը: Վոչ, այն փիլիսոփայութունը, վոր հիմնավորել ե Ենգելսը «Անտի-Դյուրինգում», մեջջանութեանն իր չեմքն ել չի թողնում»:

Յեթե Կառուցիկն, իբրև ցենտրիստ, մարքսիզմի իր ռեվիզիան վարձուցրում եր մարքսիստական Փրազարանութեամբ, ապա, որինակ, հոլանդական սոցիալ-դեմոկրատիայի ուղորտունիստների պարազուլու Տրուլտորան համառորեն պնդում եր, վոր ծրագրից հանվեն Մարքսի փիլիսոփայական հայացքներն ընդունելու պահանջները:

Ու Ինտերնացիոնալի ներկայացուցիչները բանվորների համար իբրև ուսուցիչներ հանձնարարում եյին տերտերականութեան ամենամոլի պաշտպաններին: Սոցիալիստական «Der Kampf» ժուռնալում Ֆ. Ալշերը 1908 թվին հանձնարարում եր Կոռնելիուսին, վորին Լենինը մերկացնում եր իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատութեան մեջ իբրև ուրյաղնիկ՝ պրոֆեսորական ամբիոնի վրա: Լենինը գրում եր. «Մախիզմի միջոցով ուղղակի փիլիսոփայական ռեակցիոններներն և Փիլիզմի քարո-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XXVIII, էջ 524:

չիչներին ներս են խցկում ու դարձնում բանվորների ուսուցիչներ»<sup>1</sup>:

Ու Ինտերնացիոնալի ուղորտունիստները մախիզմի քարոզի հետ միասին հանդես եյին դալիս կրոնի ուղղակի պաշտպանութեամբ, այն հայացքների քարոզով, վորոնք ըստ եյութեան վաչընչով չեյին տարբերվում Բողոքանովի, Լուսաշարսկու և Ֆյուսաստովածաշինարարների հայացքներից:

Կառուցիկն պաշտպանում եր քրիստոնեյութունը և հաստատում եր, վոր քրիստոնեյութեան քարոզը իբրև թե համատեղելի չե հեղափոխական պայքարի հետ: Գրիստոնեյութեան պատմութեան վերաբերյալ նրա աշխատութունը ռեվիզիայի չե յենթարկում մարքսիստական դրույթը կրոնի վերաբերյալ՝ իբրև ժողովրդի հաշիշի: Ե. Վանդերվելդեն անց եր կացնում այն թեզիսը, վոր իբր թե «կրոնը շողկապված ե սոցիալիզմի ընդհանուր սկզբունքների հետ»<sup>2</sup>:

Վանդերվելդեն շիտակորեն հայտարարում եր. «Վոչինչ չի խանդարում միաժամանակ լինելու քրիստոնյա և սոցիալիստ, քրիստոնյա՝ յերկնային գործերում, սոցիալիստ՝ յերկրային գործերում»<sup>3</sup>:

Յր. Շտամպֆերն ազդարարում եր, վոր անհրաժեշտ ե «մարդկային» նոր կրոն:

Կրոնը դեղազարդում եյին Ու Ինտերնացիոնալի «ձախերի» նաև առանձին ներկայացուցիչները: Այսպես որինակ, հոլանդական սոցիալ-դեմոկրատ Պաննեկուկը 1905 թ. կարդացած «Սոցիալիզմը և կրոնը» դասախոսութեան մեջ ասում եր. «Կրոնը հանդիսանում ե մարդկային պատմութեան հարգարժան յերեվույթներից մեկը»<sup>4</sup>:

Մարքսը Չախջախիչ քննադատութեան ե յենթարկել քրիստոնեյութեան գեղազարդման բոլոր փորձերը, քրիստոնեյութեան քարոզը հեղափոխական պայքարի հետ միացնելու փորձերը: «Ռեյնի տեսարանի» «Կոմունիզմ» հոդվածում Մարքսը գրում ե. «Գրիստոնեյութեան սոցիալական սկզբունքներն արդարացնում

<sup>1</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 241, Հայ. Բողոքատ, 1939 թ.:

<sup>2</sup> Յր. Շտամպֆեր և Ե. Վանդերվելդե — Սոցիալ-դեմոկրատիան և կրոնը: էջ 88: 1907 թ.:

<sup>3</sup> Ե. Վանդերվելդե — Սոցիալիստական ետյուզներ: էջ 103: Հրատ. «Голос», Մոսկ, 1908:

<sup>4</sup> Ս. Պաննեկուկ — Սոցիալիզմը և կրոնը, էջ 8, 1906 թ.:

եյին անտիկ ստրկութիւնը, փառաբանում էյին միջնադարյան ճորտատիրութիւնը և կարողանում են նույնպէս, կարիք յեղած դեպքում, պաշտպանել, թեկուզ վողորմելի ծամածուծութեամբ, պրոլետարիատի «արդէ կեղեքումը»<sup>1</sup>, «...քարոզում են դասակարգերի—տիրապետող և ստրկացւող դասակարգերի—դուրսըստ անհրաժեշտութիւնը...»<sup>2</sup>: Այնուհետև Մարքսը գրում է, վոր քրիստոնէյութեան սոցիալական սկզբունքները, փրկութիւն խոստանալով յերկնքում, արդարացնում են ամեն տեսակ դարչելութիւնները յերկրի վրա, սրբագործում են կեղեքիչներէ բոլոր զագրելութիւնները:

Մարքսն այս հոգւածում ցույց է տալիս, վոր քրիստոնէյութեան սոցիալական սկզբունքները փառաբանում են վասիլիտութիւնը, արհամարհանքը դեպի սեփական անձը, ինքնանվաստացումը, յենթարկումը, հնազանդութիւնը:

Կառուցիկն և II Ինտերնացիոնալի մյուս ուղորտունիստները կրոնն աղբարարում էյին մասնավոր գործ կուսակցութեան նկատմամբ, և վոչ թե պետութեան նկատմամբ:

Սոցիալ-դեմոկրատիայի շարքերում կան «կրոնական սոցիալիստներ», «քրիստոնէյական սոցիալիստներ» խմբեր:

II Ինտերնացիոնալի ուղորտունիստները 1910 թվին ուղղակի կանդնացին ի պաշտպանութիւն հոլանդական ուղորտունիստ Տրուստարայի, վորը մինչև այն տեղը հասավ, վոր պաշտպանում եր գալորոցներում կրոն դաստիարակելու համար պետական միջոցներ բաց թողնելը: Լենինն անխնայորեն մերկացնում եր Կառուցիկ և կոմպանիայի կողմից կրոնը մասնավոր գործ աղբարարելը՝ կուսակցութեան համար: Իր «Սոցիալիզմը և կրոնը» հոդվածում Լենինը գրում եր. «Սոցիալիստական պրոլետարիատի կուսակցութեան նկատմամբ կրոնը մասնավոր գործ չէ: Մեր կուսակցութիւնը բանվոր դասակարգի աղատադրման գլխակից առաջավոր մարտիկներէ միութիւնն է: Մի այդպիսի միութիւնն չի կարող և չպետք է անտարբեր վերաբերվի դեպի անգիտակցականութիւնը, դեպի տգիտութիւնը կամ խափարածողութիւնը, ինչպէս կրոնական հափատալիքներն են»<sup>3</sup>:

Լենինը Կառուցիկն անվանում է դոկտիկ այն սինդման համար, թե կրոնը մասնավոր գործ է հանդիսանում կուսակցութեան համար:

Կրոնը կուսակցութեան նկատմամբ մասնավոր գործ աղբարարելը Լենինն անվանում է կատարյալ դափաճանութիւն պրոլետարիատի հեղափոխական ծրագրին: Լենինը գրում է, վոր այդ թեղիսով ուղորտունիստները նվաստացնում են «հեղափոխական պրոլետարիատի կուսակցութիւնը՝ հասցնելով մինչև ամենագոնհիկ «աղատամիտ» մեղանութեան մակարդակը, այն մեղանութեան, վորը պատրաստ է թույլ տալու արտադախանանքային կացութիւն, բայց հրաժարվել է ժողովրդին հիմարացնող կրոնական հաշիշի դեմ կուսակցական պայքար մղելու խնդրից»<sup>1</sup>:

Աստիածաշինարարները II Ինտերնացիոնալի ուղորտունիստներէ հետևից կրկնում էյին նրանց բոլոր տափակութիւնները կրոնի մասին: II Ինտերնացիոնալն իզուր չէր պաշտպանում աստիածաշինարարութիւնը: Կառուցիկն հանդես եր դալիս Կապրի կղզու աստիածաշինարարական Փրակցիոն կենտրոնի ուղղակի պաշտպանութեամբ: Աստիածաշինարարներն ուղտագործեցին Կառուցիկ նամակը, վորը դեփոհութիւնն եր արտահայտում այն առթիվ, վոր Լենինը մերկացնում եր Բողոքանովի, Լունաչարսկու և մյուսների մախիզմն ու աստիածաշինարարութիւնը: Բողոքանովը բոլշևիզմի դեմ պայքարելիս հատկապէս վկայակոչում եր Կառուցիկն, վորովհետև Կառուցիկն հիանալի յեր համարել Կապրիի դպրոցի ծրագրերը, վորը պարունակում եր մախիզմի ու աստիածաշինարարութեան քարոզ:

Լենինը, ինչպէս մասնանշում եր ընկեր Ստալինը «Пролетарская Революция» ժուռնալի խմբագրութեանն ուղղած նամակում, մերկացնելով II Ինտերնացիոնալի ուղորտունիզմը, պարզաբանում եր, վոր չի կարելի պայքարել ուղորտունիստների ու ցենտրիստ-հաշիվողականների դեմ, «...դիժ չվարելով դեպի խցումը, դիժ դեպի պառակտումը II Ինտերնացիոնալի ուղորտունիստների ու ցենտրիստների հետ»<sup>2</sup>: Ընդամին Լենինը պարզաբանում եր նմանապէս և II Ինտերնացիոնալի «ձախերին» մախիզմի և աստիածաշինարարութեան դեմ մղվող պայքարի ամբողջ հակառակական քաղաքական նշանակութիւնը:

Լենինը հատկապէս գրուցում եր Ռոզա Լուքսեմբուրգի հետ աստիածաշինարարութեան և մախիզմի մասին, նրան ուղարկեց մի որինակ իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» սքանչելի աշխատութիւնից:

<sup>1</sup> Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, հ. V, էջ 173:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Լենին, Յերկեր, հ. VIII, հայ., էջ 598:

<sup>1</sup> Լենին, Յերկեր, հ. XXI, էջ 422:

<sup>2</sup> Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 690—691, Հայկուհարտ, 1937 թ.:

Պայքարելով աստիճանաշինարարներին և Ս Ինտերնացիոնալի բանակից յելած նրանց պաշտպաններին դեմ, Լենինը միևնույն ժամանակ մերկացնում էր Հուդա Տրոցկու դազրելի հողվածները, վորոնք տպագրվել էին Ս Ինտերնացիոնալի սրբաններում, ցույց տալով Տրոցկու ամբողջ դավաճանական դերը, վորը կայանում էր Տրոցկու կողմից լիկվիդատորությունը և «աստիճանային սոցոլիստներին» պաշտպանելու մեջ:

Ա. Մ. Գորկուն ուղղած նամակում 14/XI—1910 թ., Լենինը գրում է. «Մենք Պլեխանովի հետ արդեն կոպենհագենում յեռանդազին բողոքեցինք «Vorwärts»-ում տպագրված՝ Տրոցկու ամենասուր հողվածի դեմ: Իսկ դեռ ինչպիսի՞ նողկանք է նա տպագրել «Neue Zeit»-ում ուսական ս.-դ. շարքերում պայքարելու պատմ[ական] խմաստի մասին»<sup>1</sup>:

«Այս ժամանակաշրջանում Կամենեվը, Զինովյեվը, Ռիկովը իրականում Տրոցկու թաղնված ազենտներ դուրս յեկան, վորովհետև հաճախ ոգնություն էլին ցույց տալիս նրան ընդդեմ Լենինի»<sup>2</sup>,—ասված է «Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթացում»:

Հետագայում իբրև ժողովրդի ամենակատարի թշնամիներ մերկացված Բուխարինը, Զինովյեվը, Տոմսկին, Ռիկովը, Կամենեվը, արդեն այն ժամանակ լինելով Տրոցկու գործակալները, պաշտպանում էին «չուռ տված լիկվիդատորներին»—սոցոլիստներին ու աստիճանաշինարարներին: Լինելով «Пролетарий» լրագրի խմբագրական կոլեգիայի անդամներ, Կամենեվն ու Զինովյեվը 1909 թ. փետրվար—մարտին, Լենինի բացակայության ժամանակ, վորոշում ընդունեցին չհրապարակել այն հողվածները, վոր ուղղված են Լուենաչարսկու աստիճանաշինարարության դեմ: Իմանալով այս վորոշման մասին, Լենինը բողբք ներկայացրեց խմբագրությանը, և Լենինի պնդմամբ այս վորոշումը վերաքննվեց: «Пролетарий»-ի ընդլայնած խմբագրության նիստում Տոմսկին ձեռնպահ մնաց աստիճանաշինարարությունը դատարարելու հարցի քվեարկության ժամանակ: Ռիկովն ու Կամենեվը ձեռնպահ մնացին «Пролетарий»-ում այն փիլիսոփայական հողվածները գետեղելու հարցի քվեարկության ժամանակ, վորոնք ուղղված էին գլխավորապես Բոգդանովի, Լուենաչարսկու և

մյուսների դեմ: Կամենեվը յերկերսանիություն էր անում և Լենինի թիկունքում գրում էր Բոգդանովին, այն մասին, վոր Բոգդանովի փիլիսոփայությունը իբր թե պրոլետարական է: Բուխարինը խիստ թշնամաբար վերաբերվեց Լենինի «Մտտերիայից և հմայիրիտերիտիցիդ» գրքին, հայտնելով, թե ինքը պաշտպանում է կրոնի բողոքանովյան ըմբռնումը: Իր հակահեղափոխական հայացքները հաստատելու համար նա վերցրեց Բոգդանովի՝ հախարակչություն թեորիան:

\* \* \*

Ռուսական մենչևիկներից միայն Պլեխանովը քննադատեց աստիճանաշինարարությունն ու մախիզմը, և այն էլ ամենեին վոչ բավարար չարիով:

Ռեակցիայի ժամանակաշրջանում Պլեխանովը մենչևիկ-կուսակցական էր: 1911—1912 թվականներին է հակակշիռ Տրոցկու ոգոստոսյան հակակուսակցական բլոկի, վորը կազմված էր բացառապես կուսակցությանը թշնամի տարբերից և վորի մեջ մթա-նում էլին նմանապես աստիճանաշինարարները, սկզբունքային հիման վրա ստեղծվեց բուլչևիկների բլոկ պլեխանովականների հետ:

«Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթացն» այսպես է գնահատում այդ բլոկը. «Պլեխանովը և մենչևիկ-կուսակցականները նրա խումբը, մի շարք հարցերում մնալով մենչևիկյան դիրքերում, վճռականորեն սահմանադատվեցին Ոգոստոսյան բլոկից ու լիկվիդատորներից և սկսեցին համաձայնություն ձգտել բուլչևիկների հետ: Լենինն ընդունեց Պլեխանովի առաջարկը և համաձայնեց ժամանակավոր բլոկ կազմել Պլեխանովի հետ՝ ընդդեմ հակակուսակցական տարբերի, յեղնելով այն բանից, վոր այդպիսի բլոկը ձեռնտու չէ կուսակցության համար և կորստաբեր է լիկվիդատորների համար»<sup>1</sup>:

Ընկեր Ստալինն այդ ժամանակ գտնվելով աքսորում, ամբողջովին պաշտպանում էր այս բլոկը: 1910 թվին Սոլովչևգոզսկի աքսորավայրից Լենինին ուղղած նամակում ընկեր Ստալինը աքսորավայրից Լենինին ուղղած նամակում ընկեր Ստալինը գրում է, վոր «բլոկի պլանի մեջ յերևում է Լենինի ձեռքը...»: Ընկեր Ստալինն ընդգծում է այդ բլոկի սկզբունքայնությունը. «Լենին—Պլեխանով բլոկը հենց այն պատճառով է կենսական հանդիսանում, վոր նա խորապես սկզբունքային է, հիմնված է հա-

<sup>1</sup> Լենինյան ժողովածու XIII, էջ 191:

<sup>2</sup> «Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթաց», էջ 164, Հայ. Բաղհրատ, 1938 թ.:

<sup>1</sup> «Համկ(բ)ի պատմության համառոտ դասընթաց», էջ 185—186, Հայ. Բաղհրատ, 1938 թ.:

յացքները միասնութեան վրա՝ կուսակցութեան վերածնման ուղիները հարցում»<sup>1</sup>։

Լենինն ու Ստալինը բլոկի հաստատումը համարում էին բոլշևիզմի հաղթանակը, վորովհետև այս բլոկը մենչևիկ բանվորներին պոկում—անջատում էր լիկվիդատորները։

Պլեխանովը դեմ էր աստվածաշինարարութեանը։ Նա վողջունեց բոլշևիկների սահմանադատումը աստվածաշինարարներից։ Բայց նա պաշտած հակահարված չտվեց աստվածաշինարարութեանը։ Միայն Լենինը պոկեց այդ վերասերվածների դիմակը՝ մարքսիզմի թեորիայի բնագավառում։ Լենինը պաշտպանեց մարքսիստական կուսակցութեան թեորիական հիմունքները, մինչև վերջը մերկացրեց մախիզմն ու աստվածաշինարարութեանը, ազելի շարժացրեց մարքսիզմի թեորիան իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» հոշակավոր գրքում։

«Կարելի չէր սպասել, վոր այդ խնդրի իրագործմանը ձեռնամուխ կլինեն Պլեխանովը և նրա մենչևիկյան բարեկամները, վորոնք իրենց համարում էին «մարքսիզմի հայտնի թեորետիկներ», բայց նրանք գերադասեցին գլուխ աղատել Ֆելյետոնային—քննադատական բնույթ կրող հատուկենտ աննշան հողիվածներով և ապա թփերի տակ մտնել»<sup>2</sup>։

1908 թ. մարտի 24—ին Ա. Մ. Գորկուն գրած նամակում Լենինը նշում է, վոր Պլեխանովը չի կարողանում կամ չի ցանկանում հանդես գալ Բապարովի, Բոգդանովի և մյուսների տերտերական գաղափարների դեմ։ Լենինը գրում է. «Պլեխանովն ըստ էության ամբողջովին իրավացի չէ նրանց դեմ, միայն թե չի կարողանում կամ չի ուզում կամ ծուլանում է այդ ասելու կոնկրետ, հանգամանորեն, պարզ, առանց հասարակութեան անտեղի վախեցնելու փրկսոփայական նրբություններով։ Յեվ յետինչ էլ վոր լինի այդ կասեմ իմ ձեռքով»<sup>3</sup>։

Պլեխանովի տված՝ մախիզմի ու աստվածաշինարարութեան քննադատութեանը արժեքազուրկ էր դառնում փրկսոփայութեան մեջ Պլեխանովի թույլ տված մի շարք սխալների շնորհիվ, նրա կողմից այն կապը չըմբռնելու շնորհիվ, վոր գոյություն ուներ

մախիզմի ու բնագիտութեան ճգնաժամի միջև, վորն սկսվել էր XIX դ. վերջում ու XX դ. սկզբում։ Դեռ այնքին. Պլեխանովը Ֆրակցիոն նպատակներով ոգտադործում էր մախիզմի ու աստվածաշինարարութեան դեմ մղվող պայքարը՝ բոլշևիկների դեմ յուլյանը կատարելու համար։

Լենինը 1908 թ. Ա. Մ. Գորկունն ուղղած նամակում գրում էր, վոր Պլեխանովը վնասում է մարքսիստական փրկսոփայութեանը նրանով, վոր կապում է այդ «...պայքարը Ֆրակցիոն պայքարի հետ, բայց չէ՞ վոր այժմյան Պլեխանովին վոչ մի ուսուցիչ—դեմոկրատ չպետք է շիտի հին Պլեխանովի հետ»<sup>4</sup>։ Լենինն իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատութեան մեջ նշում է «թեորիական արմատական տարածաշնությունների մանր ու չնչին ոգտադործումը»<sup>5</sup> Պլեխանովի կողմից։ Լենինի խոսքերով, «մախիզմի դեմ ուղղված իր դիտողությունների մեջ Պլեխանովը վոչ այնքան մտահոգված էր Մախի հերքմամբ, վորքան բոլշևիզմին Ֆրակցիոն վնաս հասցնելու խնդրով»<sup>6</sup>։ Աստվածաշինարարները զանդատվում էին Լենինի անհաշտութեան դեմ, և Պլեխանովը նրանց այդ զանգամներն ոգտադործեց Լենինի դեմ հարձակումներ գործելու համար։ Պատասխանելով այս հարձակումներին, Լենինն ասում էր. «...Առյւնիսկ ընկ. Պլեխանովը վողջորմություն տվեց ի սեր աստծու, ոգտվելով Մաքսիմովի նվոցից, և այս առթիվ բոլշևիկներին նորից ու նորից անվանեց սղաժանարարներ»<sup>7</sup>։

Նշելով Պլեխանովի այդ հարձակումները, նրա արմատական թերությունները մախիզմի քննադատութեան մեջ, հարկավոր է այնուամենայնիվ մատնանշել, վոր աստվածաշինարարների նրա քննադատութեանը վորոչ գրական նշանակություն ունեցավ։

Պլեխանովն իր հողվածներում ցույց է տալիս Լուսաշարակու և Բոգդանովի աստվածաշինարարութեան կապը մախիզմի հետ։ Ընդամին նա քննադատում է Բոգդանովի հանրանշանակութեան թեորիան, ճիշտ կերպով մատնանշելով, վոր որչեկտիվ ճշմարտությունը բացասող այս թեորիան հանդում է անտառային վողջիների ու սնային վողիների որչեկտիվութեան ճանաչման։ Պլե-

<sup>1</sup> Ի. Ստալին — Նամակ Կովկասից։ Ընկեր Ստալինի նամակը Լենինին Սուլեշևսկի արտոբայայրից։ Ленинград, 1933 թ., էջ 17։

<sup>2</sup> «Համկ(բ)» պատմութեան համառոտ դասընթաց», էջ 142, Հայ. Բող-հրատ, 1938 թ.։

<sup>3</sup> Լենին, Յերկեր, հ. XXVIII, էջ 535։

<sup>4</sup> Լենին, Յերկեր, հ. XXVIII, էջ 524։

<sup>5</sup> Լենին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», էջ 306, Հայ. Բող-հրատ, 1939 թ.։

<sup>6</sup> Նույն տեղում։

<sup>7</sup> Լենին, Յերկեր, հ. XIV, էջ 159։

խանութիւնը յեղրակացնում է, վոր—ըստ Բողղանովի—«կար ժամանակ, յերբ անային վոգուն հատուկ եր որչեկտիվ դոյութուն»:

Կատարելապէս ճիշտ է նկատում նա, վոր բուրժուական թեորիական օրհանգիստն «մեզանում կատարվում է փիլիսոփայական իդեալիզմի դրոշի ներքո»:

Պլեխանովը Լենինից անմիջապէս հետո հանդես գալով խիստ քննադատութեան յենթարկեց լիկվիդատոր Պոտրեսովի այն պընդումները, թէ իբր փիլիսոփայական վեճերը դատարկ բաներ են: Պլեխանովը գրում է. «...ամենեւին պատահական չէ այն հանգամանքը, վոր բուրժուազիայի բացարձակապէս բոլոր իդեոլոգները մեզնում այժմ կողմնակից են իդեալիզմին: Մատերիալիզմն անհաշտելի յէ կրոնի հետ, իսկ ներկայիս մեր բուրժուան թանգ է գնահատում կրոնը, վորովհետեւ սրա վրա հենվելով, նա կարծեցյալ տրամաբանական իրավունք է ձեռք բերում ատելու պրոլետարին, ինչպէս ըստ էյության հենց ասում էլ է պ. Մարտիկեն (տես «Вехи»). «Քո ուղիկալիզմն ուղղիւր դեպի յերկինք, իսկ յերկրի վրա բալարարկիւր մանր օւֆորմներով»<sup>1</sup>:

1909 թվին Պլեխանովը յերեք հոգիված գրեց «Այսպէս կոչված կրոնական վորոնումների մասին Ռուսաստանում», վորոնք ուղղված էյին աստվածաշինարարների և աստվածորոնողների դէմ: Այդ հոգիվածներում նա ցույց է տալիս Լունաչարսկու այն փորձերի սնանկութունը, վորոնց նպատակն էր ստեղծել կրոն անանց աստծու և Մարքսի ուսմունքը հայտարարել կրոն: Պլեխանովն ընդգծում է Մարքսի ու Ենգելսի բացասական վերարբոնունքը դեպի կրոնը:

Պլեխանովը գրում է, վոր Մարքսը «Ֆրադյորութուն էր համարում ամեն տեսակ ասեկոսները «մարդկային ինքնագիտացութունը մարդկային կրոնի» վերածվելու մասին»: Նա մերժում է Լունաչարսկու փորձերը՝ Մարքսին իջեցնելու մինչև Յոյերբախի աստիճանը: Լունաչարսկին Յոյերբախի ծառայութունը տեսնում է նոր կրոն քարոզելու մեջ և այս քարոզը վերադրում է նաև Մարքսին: Պլեխանովը ցույց է տալիս, թէ ինչպէս Մարքսն ու Ենգելսը քննադատում էյին Յոյերբախին այն բանի համար, վոր վերջինս հնարել էր սիրո կրոնը: Պլեխանովը գրում է, վոր հակառակ Լունաչարսկու, Յոյերբախի նոր կրոնի քարոզի մեջ «պետք է տեսնել Յոյերբախի վո՛չ թէ ծառայութունը, վո՛չ թէ

նրա խորութունը, այլ նրա թուլութունը, նրա կողմից իդեալիզմին արված զիջումը»<sup>2</sup>:

Պլեխանովը սրամիտ կերպով ցույց է տալիս Լունաչարսկու՝ նոր կրոնի կարոտի հասարակական վողջ նշանակութունը: Ըստ Պլեխանովի—կարոտը վոմանց «ստիպում է ողի խմել, վոմանց—միթարութուն դառնել հին կրոններից մեկի մեջ, վոմանց էլ «ստիպում է յերազել այս կամ այն նար կրոնի մասին»<sup>3</sup>:

Պլեխանովը ցույց է տալիս, վոր մանր-բուրժուական ինտելիգենցիայի մոտ՝ օրհանգիստի ժամանակաշրջանում կրոնական տրամադրութունները կապված էյին հեղափոխութունից հիասթափվելու հետ: Լունաչարսկին, ըստ Պլեխանովի, կարում է նորազույն վհատութեան տաք հազուստ:

Ընդամին նա ծաղրում է Լունաչարսկու փորձերը՝ կրոնական հազուստով զարգարելու սոցիալիզմը:

«Յեթէ նրա խելքին փչել է սոցիալիզմը կրոնական հազուստով զարգարել և նույնիսկ գալիչտական ակաֆիստ է հորինել մարդ-աստծու համար, ապա սա ատելի յէ ունեցել միմիայն այն պատճառով, վոր վհատված ռուսաստանյան «ինտելիգենցիան» անձնատուր է յեղել կրոնին»<sup>4</sup>:

Նա ցույց է տալիս, վոր սոցիալիզմի համար կրոնական հազուստ ձևելու փորձեր են արել Սեն-Սիմոնը, Կարեն, Յուրյեն, Վիլհելմ վայտլինգը: Պլեխանովը հիշատակում է այն խիստ քըննադատութունը, վոր տվել է Մարքսը նոր կրոնի մարգարե շեքման Կրիզէյին:

Պլեխանովը գրում է, վոր Լունաչարսկու կրոնը մի «արժեք» ունի. «նա կարող է լուրջ ընթերցողի վոզին զցել շատ ուրախ տրամադրութեան մեջ»<sup>4</sup>:

Պլեխանովը ցույց է տալիս, վոր անհամատեղելի յէ գիտելատիկական մատերիալիզմը աստվածաշինարարութեան քարոզի հետ, անխուսափելի յէ աստվածաշինարարների հրաժարումը մարքսիստական փիլիսոփայութեանից:

Մերկացնելով աստվածորոնողներ Մերեժկովսկուն և մյուսներին, Պլեխանովը գրում է. «Այդ միջավայրին պատկանող մար-

<sup>1</sup> Պլեխանով, Յերկեր, հ. XIX, էջ 150—151:

<sup>2</sup> Պլեխանով, Յերկեր, հ. XVII, էջ 242:

<sup>1</sup> Պլեխանով, Յերկեր, հ. XVII, էջ 244:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 248:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 253:

դիկ ազգիներ են վարձուում դեպի յերկինք այն պարզ պատճառով, վոր հրանք շեղվել են քանապարհից յերկրի վրա»<sup>1</sup>:

Աստվածաշինարարութեան պլեխանովյան քննադատութեան թերութիւնն այն է, վոր նա թերազնահատում է մասիկովի ու աստվածաշինարարութեան իսկական քաղաքական վնասը և վոր այդ քննադատութեան մեջ բացակայում է կրօնի սոցիալական տրամասներէ խոր անալիզը: Նրա կարծիքով, «կրօնը կարելի չէ բնորոշել իբրև մտապատկերների, տրամադրութիւնների ու գործողութիւնների ամբողջ կամ պակաս ներդրանակ սիստեմ»<sup>2</sup>: Այս բնորոշումն արատրակա բնույթ է կրում և ցույց չի տալիս կրօնի բնույթն իբրև ժողովրդի հաշիշի, իբրև հոգևոր ողու, իբրև շահագործման գենքերից մեկի:

Քննադատելով Լուենաչարսկու աստվածաշինարարութիւնը, Պլեխանովը բերում է Մարքսի նշանավոր խոսքերը «Հեղելի իրավունքի փիլիսոփայութեան քննադատութեան շուրջը» աշխատութիւնից, վորոնք բացահայտում են կրօնի սոցիալական էությունը: Բայց Մարքսից բերելով մի յերկար ցիտատ, նա բաց է թողնում Մարքսի դրույթը կրօնի մասին իբրև ժողովրդի հաշիշի, այն դրույթը, վորը հանդիսանում է կրօնի մարքսիստական քննադատութեան անկյունաքարը: Պլեխանովը, որինակ, բաց է թողել Մարքսի հետևյալ նշանավոր խոսքերը. «Կրօնական աղքատութիւնը միևնույն ժամանակ աղքատութեան իրական լինելու արտահայտութիւնն է և բողոք է ընդդէմ իսկական աղքատութեան: Կրօնը—դա կեղեքված արարածի հառաչանքն է, անսիրտ աշխարհի հողին, անհողի անժամանակայնութեան վողին: Նա ժողովրդի հաշիշն է»<sup>3</sup>: Պլեխանովի՝ աստվածաշինարարութեան քննադատութիւնն արժեքազուրկ է դառնում նրանով, վոր նա, քննադատելով Լուենաչարսկուն, Փրակցիոն հարձակում է կատարում բոլշևիկների դեմ:

Բողոքանովի, Լուենաչարսկու և մյուսների դեմ մղած պայքարում Պլեխանովը սահմանափակվել է Փելլետտոնային տիպի հողվածներով: Լենինն իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատութեան մեջ մերկացնելով բոլոր հակամարքսիստական թերութիւնները, անխնայ պայքար մղելով իդեալիզմի ու կրօնի բոլոր տեսակների դեմ, նոր, ավելի բարձր աստիճանի հասցրեց դիա-

լեկտիկական մատերիալիզմը և մասնավորապէս Մարքսի—Ենգելսի ուսմունքը կրօնի և նրա դեմ պայքարելու մասին:

Իր «Լենինիզմի հիմունքների մասին» աշխատութեան մեջ ընկեր Ստալինը գրում է, վոր «... վոչ այլ վոք, բայց յեթէ Լենինը ձեռնարկեց իրագործելու լրջագույն մի խնդիր, այն է՝ ընդհանրացնել այն ամենակարևոր մատերիալիստական փիլիսոփայութեան վերաբերյալ, ինչ տվել է գիտութիւնը Ենգելսից մինչև Լենինը ձգվող ժամանակաշրջանում, և ամենակողմանի քննադատութեան յենթարկել մարքսիստների շրջանում գոյութիւն ունեցող հակամատերիալիստական հոսանքները»<sup>1</sup>, և այնուհետև, խոսելով Պլեխանովի մասին, ընկեր Ստալինն ընդգծում է. «... Պլեխանովը, վոր սիրում էր ծիծաղել փիլիսոփայութեան նկատմամբ Լենինի ունեցած «անհողութեան» վրա, վճռականութիւն չունեցավ նույնիսկ լրջորեն դիմելու այդպիսի մի խնդրի իրագործման»<sup>2</sup>:

#### IV

#### ՅԵԶՐԱՓՍԿՈՒՄՆ

Լենինը մեկից ավելի անգամ նշել է նաև պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կրօնի դեմ պայքարելու հսկայական նշանակութիւնը: Իր «Մարտնչող մատերիալիզմի նշանակութեան մասին» հոդվածում՝ նվիրված «Под знаменем марксизма» ժուռնալի խնդիրներին, Լենինն ընդգծում է բուրժուազիայի դասակարգային դիրքերի ու նրա կողմից կրօնի ամեն տեսակ ձևերի պաշտպանութեան միջև յեղած կապը և պահանջում է անշեղորեն մերկացնել «տերտերականութեան ժամանակակից բոլոր գեպլումավոր լակեյներին»: Լենինը ցույց է տալիս, թէ ինչպէս բուրժուազիայի ներկայացուցիչները, քննադատելով հին կրօնը, փոխարինում են «հին ու նեխած կրօնական նախապաշարմունքները խարխնում են «հին ու նեխած կրօնական նախապաշարմունքներով»: Լենոր, ե՛լ ավելի գարշելի ու ստոր նախապաշարմունքներով»: Լենինը ժուռնալից պահանջում է, վոր նա իր աթելիստական պրոլետարիատում տար ավելի կոնկրետ փաստեր, վորոնք ցույց տան «ժամանակակից բուրժուազիայի դասակարգային շահերի և դասակարգային կազմակերպութիւնների կապը կրօնական հաստատութիւնների կազմակերպութիւնների և կրօնական պրոպագան-

<sup>1</sup> Պլեխանով, Յերկեր, 4. XVII, էջ 291:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 197:

<sup>3</sup> Կ. Մարքս և Ֆ. Ենգելս, Յերկեր, 4. I, էջ 399:

<sup>1</sup> Ի. Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 28, 2այ. Կուսկրտ, 1937 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում:

դայի հետ»<sup>1</sup>: Լենինը ցույց է տալիս, վոր չի կարող մարտնչող մատերիալիզմ լինել առանց մարտնչող աթեիզմի:

Համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինը, շարունակելով Լենինի գործը բոլոր բնագավառներում, ավելի զարգացնելով մարքսիստական-լենինյան թեորիան, ընդգծում է ամեն տեսակ կրոնական նախապաշարմունքների դեմ պայքարելու հարցի հսկայական նշանակությունը: Տակավին 1913 թվին իր «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության մեջ ընկեր Ստալինը գրում էր, վոր սոցիալ-դեմոկրատիան, պաշտպանելով ազգերի իրավունքը՝ դավանելու ուզած կրոնը, միևնույն ժամանակ պրոպագանդա յե մղում ընդդեմ ամեն տեսակ կրոնի, վորպեսզի ապահովի սոցիալիստական աշխարհայացքի հաղթանակը, վորովհետև ամեն մի կրոն հակասում է մարքսիստական ծրագրին և հակառակ է դնում նրան:

Կրոնական նախապաշարմունքների հաղթահարման հարցերը մի առանձին ուժով առաջ են մղվում արդեի ժամանակաշրջանում, յերբ ամբողջ աշխարհի աշխատավորների առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությունում մեր յերկրում հիմնականում կառուցված է սոցիալիզմը: ԽՍՀՄ աշխատավորներն ավելի ու ավելի շատ են ազատագրվում կրոնական թմբիրից:

Մակայն դեռևս կապիտալիզմի մնացուկները գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ: Մարդկանց գիտակցության մեջ այսպիսի մնացուկներից մեկն են հանդիսանում կրոնական նախապաշարմունքները: Մեր կուսակցությունը մերկացրել է կրոնի «սարերային» մահացման փրամ թեորիան:

Կրոնի դեմ մղվող պայքարի ամեն մի թուլացում ու թերա-

<sup>1</sup> Լենին, Յերկեր, 4. XXVII, էջ 244, Հայ. Պետհրատ, 1932 թ.:

Լենինի միտքը բուրժուազայի դատակարգային դիրքերի և նրա կողմից կրոնի ամեն տեսակ ձևերի պաշտպանության կապի մասին, հին, նեխած կրոնական նախապաշարմունքները նոր, է՛լ ավելի զարգելի ու սուր նախապաշարմունքներով փոխարինելու մասին՝ կարելի յե իլյուստրացիայի յենթադրել 1921 թվին Պրագայում լույս տեսած «Смена веж» ժողովածվի սրինակով: Այս ժողովածուն կրկնելով է աստվածաշինարարների զաղափարները, պետությունը հայտարարում է միտաթիկան, հույս է հայտնում, վոր ուսական պետությունը կլինի աստծու թաղավորությունը յերկրի վրա, խոսում է ուսական ինտելեկտիցիայի աստվածաշինարարության մասին և այլն:

Աստվածաշինարարության վերաբերյալ այս բոլոր ֆրագները հետևը թաղանթում էր հակահեղափոխական բուրժուազայի հույսը խորհրդային իշխանության վերածնունդի նկատմամբ, ասելով յուրը գեպի պրոլետարիատն ու նրա կուսակցությունը:

գնահատությունները կրեց հակահեղափոխական նպատակների համար ոգտագործում են շահագործող ջախջախված դատակարգերի մնացորդները, արոցիկատական և բուխարինյան սրիկաների ջախջախված բանդայի մնացորդները, վորոնք շահագործված են աշխատավորների գիտակցությունը կրոնական թմբիրով թունավորելու համար: Հակահեղափոխական գործունեություն մեջ մերկացված մի շարք տերաերներ, վորոնք ասպտամբություն էյին պատրաստում խորհրդային իշխանության դեմ, Ներքդործող-կոմատի որդաններին աված իրենց ցույցունքներում հայտարարում էյին, վոր իրենք հույս ունեյին Ֆաշիստական ադենտներ՝ արոցիկատական-բուխարինյան սրիկաների հաղթության դեպքում վերականգնել յեկեղեցու այն դիրքը, վոր նա գրավում էր ցարիզմի ժամանակ:

Պետք է մերկացնել կրոնը, թեկուզ ինչպիսի հադուսաներով էլ վոր նա զարգարվի:

Աղանդավորների պարալուխները քիչ չեն բարբաջում կրոնը «նորոգելու» մասին, նրանք մինչև իսկ քարոզում են կրոնի անհաշտելիությունը սոցիալիզմի ու գիտության հետ: Այս բոլորը մի փորձ է՝ համարելու փոփոխված պայմաններին: Անհրաժեշտ է մշտականապես մերկացնել յեկեղեցականների ու աղանդավորների պարալուխների դեմադրիան այն մասին, վոր իբր թե կրոնը չի խանդարում սոցիալիզմի կառուցմանը:

Ստալինյան Սահմանադրությունը ապահովել է խորհրդային Միության բոլոր քաղաքացիների համար խղճի ազատություն: Խորհրդային Միության մեջ յեկեղեցին լիովին անջատված է պետությունից և զգրոցը՝ յեկեղեցուց: Ստալինյան Սահմանադրությունն ընդունում է բոլոր քաղաքացիների կրոնական պաշտամունք կատարելու ազատությունը և հակակրոնական պրոպագանդայի ազատությունը:

Կրոնական պաշտամունքներ կատարելու ազատությունը, տերաերներին ձայնի իրավունք տալը բնավ չի նշանակում հակակրոնական պրոպագանդայի դադարեցում: Անհրաժեշտ է ուժեղացնել հակակրոնական պրոպագանդան, հիշելով, վոր թշնամի տարրերը սոցիալիզմի դեմ կատաղի պայքար մղելիս ոգտագործում են բոլոր միջոցները, այս թվում նաև կրոնական նախապաշարմունքները: Կապիտալիստական շրջապատը աշխատում է և շարմունքները: Կապիտալիստական հակահեղափոխական նպատակալիսի աշխատի իր բանդիտական հակահեղափոխական նպատակներով ոգտագործել մարդկանց գիտակցության մեջ յեղած՝ կա-



կարգեր, ամբողջ աշխարհին ապացուցեց իր գործի արդարութիւնը: Այդ և գլխավոր արդեւունքը, վերսկզբունե նա ամբարշտութեամբ և հավատը ղեպի բանվոր դասակարգի ուժերը և ղեպի նրա վերջնական հաղթանակի անխուսափելիութիւնը»<sup>1</sup>:

Մեր յերկրի բանվոր դասակարգի պայքարն ու հաղթանակը միջազգային հսկայական նշանակութիւն ունի: Փարաջալոր ու անֆարաջա տերտերները ձգտում են բանվոր դասակարգի հողին թունաւորել կասկածի ու թերահավատութեան թունաւոր ղեպի նրա հաղթանակը կապիտալիզմի նկատմամբ:

Մեր յերկրի աշխատավորների հոյակապ հաջողութիւնները, վոր ձեռք են բերված մեծ Ստալինի ղեկավարութեամբ, բարձրացնում են կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի վողին, ամբարշտում են նրա մեջ հավատը ղեպի իր սւժերը, հավատը ղեպի իր հաղթանակը և հսկայական նշանակութիւն ունեն կրոնական նախապաշարմունքների դեմ մղվող պայքարում:



<sup>1</sup> Ստալին, Հաշվետու զեկուցում կուսակցութեան XVIII համագումարում ՀամԿ(Բ)ի Կենտկոմի աշխատանքի մասին, Էջ 78, Հայ. Գողհրատ, 1939 թ.:

- I. Գաղափարական և քաղաքական տարրնթացութիւնը լիբերալ և մանր բուրժուազէայի բանակում 1908—1912 թ. թ. սեակցիայի դարաշրջանում: Ատավածորնում: Իդեալիզմի և կրոնի դեմ սեակցիայի շրջանում մղված պայքարի նշանակութիւնը . . . . . 5
- II. Ատավածաշինարարութեան սեակցիոն էյութեան և իդեալիզմի հետ ունեցած նրա սերտ կապի մերկացումը Լենինի կողմից: Լենինի «Մասերիսիզմ և էմպիրիսիզմիսիզմ» աշխատութեան նշանակութիւնը ատավածաշինարարութեան դեմ պայքարելիս: «Վալերյուզ» խմբի հսկայական զարմունէյութեան մերկացումը Լենինի կողմից: Լենինի նամակագրութիւնը Ա. Մ. Գորկու հետ . . . . . 18
- III. Մախիզմի և ատավածաշինարարութեան պաշտպանների ու աշակիցների մերկացումը Լենինի կողմից: Պլեխանովի վերաբերմունքը ղեպի մախիզմն ու ատավածաշինարարութիւնը . . . . . 35
- IV. Յեկրտիակումն . . . . . 67

Թարգմ. Մ. Զափարյան  
Խմբ. Բ. Ն. Դավթյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Ա. Մանուկյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արսվյան

---

Գլավիլիտի լիազոր № 4—2474, հրատ. № 737,  
Պատվեր № 198, տիրաժ 10.000, թղթի չափսը  
60×92<sup>1</sup>/<sub>16</sub> (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)  
4<sup>1</sup>/<sub>2</sub> տպ. մամուլ, 2<sup>1</sup>/<sub>6</sub> թերթ թուղթ.

Հանձնված է արտադրության 2/X 1939 թ.  
Ստորագրված է տպագրելու 29/X 1939 թ.  
Գինը 1 ո.

---

Քաղաքական գրականության Պետական հրատարակչության  
ապարան, Յերևան, Ալլահյանի պող. № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0179139

ԳԻՆԸ 1 ՈՒ.

Ա. ԾԱՐԻՇՅԻՆ

ԼԵՆԻՆ Վ ԲՈՐՅԵ Տ ԲՈԳՈՏՐՈՒԹԵԼՅՑՏՎՈՄ

Գոստարստենոն Իզատելստեոն քոլԻտ. ԼԻտերատուրԻ  
Երեոան 1939